ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Վերջին ժամանակներս հայագիտության հիմնական հարցերից մեկն է դառնում հայ ժողովրդի ծագման խնդիրը։ Այս հարցով են զբաղվում հայագետ բանասերները՝ լեզվաբաններն ու պատմաբանները, հնագետներն ու մարդաբանները, սակայն բազմաթիվ հարցեր տակավին մնում են չլուսաբանված և կարոտ են նոր մեկնաբանման ու հետազոտությունների։ Հայկական էթնոսի առաջացման խնդիրը պետք է դիտել երկարատև ժամանակաշրջանի և ընդարձակ տարածության մեջ, հաշվի առնելով նրան հարևան և ցեղակից էթնիկական կազմավորումները։ Հայկական էթնոսի կազմավորման սկիզբը գալիս է հեռավոր ժամանակներից, երբ մարդկությունը ցեղ էթնիկական ընդհանրությունից անցնում էր ժողովուրդը բնորոշող էթնիկական ընդհանրության։

Էթնոսը բնորոշող ամենահիմնական հատկանիշը լեզուն է, որը հնարավորություն է տալիս թափանցելու տվյալ ժողովրդի կորիզը հանդիսացող ցեղի պատմական կյանքի առավել վաղ ժամանակաշրջանները։ Հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունը պատմա-համեմատական լեզվաբանության լույսի տակ հնարավորություն է տալիս պարբերացման ենթարկելու հայ ժողովրդի կազմավորման երկարատև ընթացքը։ Հայոց լեզվի պատմությունը լուսաբանում է հայ ժողովրդի հնդեվրոպական բաղադրատարրի գոյությունը մ. թ. ա. IV հազարամյակում։ Վերջին ժամանակների լեզվաբանական ուսումնասիրությունների այդ նախնական ժամանակաշրջանի հետևյալ պատկերն են տալիս։

Բալկանյան թերակղզում և Առաջավոր Ասիայում հաստատված հնդեվրոպական լեզուներով խոսող ցեղերի նախնական բնակության տերիտորիան ընդգրկում էր Սև ծովից դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք գտնվող ցածրավայրերը։ Հայերի հնդեվրոպական նախնիները, պատկանելով թրակական լեզվախմբին, տեղադրվում են տրիպոլյան կուլտուրայի շրջողակում[1]*։ Վերը նշված տարածություններից մ. թ. ա. IV հազարամյակում շարժվել են դեպի Փոքր Ասիա խեթերի հնդեվրոպական նախնիները, ապա «նախահունական» թրակա-պելասգյան ցեղերը՝ դեպի Բալկանյան թերակղզու հարավը, Կրետե և Կիպրոս կղզիները, այնուհետև Փոքր Ասիայի հարավային ծովափը, որտեղից նրանք թափանցում են նույնիսկ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանները։ Վերջերս լեզվաբանների ուշադրությունն է գրավել թրակա-պելասգյան «նախահունական» լեզվի առնչությունը հայոց լեզվին։ Թրակա-պելասգյան լե-*

---

[1] *Տե՛ս* А. Я. Брюсов, Очерки по истории племён Европейской части СССР в неолитическую эпоху, М., 1952, *էջ 254։ Տե՛ս և* Е. К. Черныш, Некоторые локальные особенности племён трипольской культуры (*զեկուցում՝ կարդացված Մոսկվայում, մարդաբանական և ազգագրական գիտությունների* VII *միջազգային կոնգրեսում*)։

զուների և հայերենի համեմատական ուսումնասիրությունը բուլղարական գիտնական Վլադիմիր Գեորգիևին բերում է այն եզրակացության, որ «նախահունարենը (պելասգերենը) ալբաներենի և հայերենի միջև գրավում է միջանկյալ գիրք թե՛ աշխարհագրական տեսակետից և թե՛ հնչյունական զարգացման առանձնահատկություններով»[2]։ Այս եզրակացությունների լույսի տակ իր պատմականությունն է ստանում Ստրաբոնի (XI, 4, 8) կողմից պահպանված ավանդությունը հայերի բնօրրանի մասին Թեսալիայում, որը կոչվում է Պելասգիոտիս և համարվում է պելասգների հայրենիքը։

Հայերենի և պելասգերենի («նախահունական») առնչությունների ուղղությամբ կատարված նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերեն լեզվի ուսումնասիրման ժամանակ, բացի խեթա-լուվիական լեզուներից, պետք է հաշվի առնել նաև թրակա-պելասգյան լեզուներով խոսող ցեղերը, որոնք Կիլիկիայի կողմից Կիզզվատնայի (անտիկ Կատառնիայի) վրայով թափանցում էին Հայասա-Ազզի ցեղային միության տերիտորիան և որոշ փոխազդեցությունների մեջ մտնում այնտեղ բնակվող ցեղերի հետ։ Թրակա-պելասգյան լեզուներով խոսող ցեղերի ազդեցությունը նշմարվում է Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների լեզվի, պաշտամունքի և տեղանունների ու ցեղանունների մեջ։

Ժամանակագրական տեսակետից թրակա-պելասգյան ցեղերը ավելի շուտ են թափանցել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան սահմանամերձ վայրերը, և միայն նրանցից հետո է տեղի ունեցել թրակա-փռյուգական լեզուներով խոսող ցեղերի ներթափանցումը դեպի Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ։ Թրակա-փռյուգական ցեղերից ավելի շուտ հարավ-ռուսական տափաստաններից դեպի Իրանի և Հնդկաստանի խորքերն էին շարժվել հնդիրանական ցեղերը, որոնք նույնպես որոշ ազդեցություն են թողել հայկական էթնոսի ձևավորման վրա։

Էգեյան աշխարհից մինչև հեռավոր Հնդկաստան ձգվող տերիտորիաների վրա հաստատված հնդեվրոպական լեզուներով խոսող ցեղերը սերտ հարաբերությունների մեջ են մտնում տեղաբնիկ ցեղերի հետ, ընդ որում հնդիրանական ցեղերը ստեղծում են փոխազդեցությունների ուրույն աշխարհ, իսկ նրանցից արևմուտք գտնվող Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայում և Էգեյան աշխարհում տեղի էին ունենում հնդեվրոպական մի քանի ցեղակից լեզվաընտանիքների փոխազդեցություններ։ Այդ փոխազդեցությունների արևմտյան ծայրամասում էին գտնվում Բալկանյան թերակղզու հարավային մասը և Կրետե կղզին, որտեղ գերիշխող էին «նախահունական» թրակա-պելասգյան ցեղերը, որոնց հիմքի վրա էլ ձևավորվեց հելլենական աշխարհը, իսկ արևելյան ծայրամասումն էր Հայկական լեռնաշխարհի խուրրի-ուրարտական էթնիկական կազմավորումների միջավայրը, որը մտավ երկարատև փոխազդեցությունների պրոցեսը խեթա-լուվիական և թրակա-փռյուգական հնդեվրոպական ցեղերի հետ։ Խուրրի-ուրարտական և հնդեվրոպական ցեղերի բազմաթիվ և բազմաձև փոխազդեցությունների կոնկրետ դրսևորումն եղավ հայկական էթնոսի առաջացումը։ Հայկական լեռնաշխարհի խայտաբղետ ցեղային կազմավորումներին պիտի փոխարիներ հայ ժողովուրդը, իբրև մեկ միասնական ժողովուրդ, իր միասնական լեզվով, տերիտորիայով և պետությամբ։

[2] В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 92։

Իրավամբ կարելի է ասել, որ հայ ժողովուրդը Հայկական լեռնաշխարհի առաջին իրական և կայուն ժողովուրդն է[3]։ Լեզվական, հնագիտական, մշակութային, ազգագրական և առհասարակ պատմական աղբյուրների բազմակողմանի պրպտումները բերում են այն աներկբա եզրակացության, որ հայ ժողովուրդը սկսել է կազմավորվել Հայկական լեռնաշխարհում դեռևս այն ժամանակաշրջանից, երբ այդ տերիտորիայի վրա և նույնիսկ նրա շուրջը գոյություն չունեին հնդեվրոպական լեզուներով խոսող ցեղեր և ժողովուրդներ։ Հայ ժողովուրդը իր ֆիզիկական կերպարանքով պատկանում է արմենոիդ մարդաբանական տիպին, որին պատկանում էին Հայկական լեռնաշխարհի ամբողջ տերիտորիայով տարածված տեղաբնիկ խուրրի-ուրարտական ցեղերը։ Նույնը պետք է ասել հայերի մշակութային ավանդույթների մասին։ Սակայն լեզվի խնդրում մեծ ներդրում են արել եկվոր հնդեվրոպական տարրերը։ Սրանց ցեղային լեզուներն են, որ Հայկական լեռնաշխարհում միաձուլվելով, սկիզբ են դրել հայոց լեզվի ձևավորմանը։ Հին և նոր հայերենի ու նրա բարբառների ուսումնասիրությունը վերջնականապես ցույց է տվել, որ հայոց լեզվի կորիզը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին։ Բայց այն ժողովրդի լեզու է դարձել տեղաբնիկ խուրրի-ուրարտացիների և այլ ցեղերի լեզուներից մեծապես ազդվելով ու նրանց բառամթերքի հաշվին խիստ հարստանալով միայն։

Հայ ժողովրդի ձևավորման ընթացքը, որը տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհի տերիտորիայի վրա, սկսվում է մ. թ. ա. II հազարամյակի կեսերին և ավարտվում է հայկական պետականության առաջացմամբ մ. թ. ա. VII դարի վերջերին և VI դարի սկզբներին։ Ժողովրդաառաջացման և լեզվաստեղծման այս երկարատև պրոցեսը սկսվում է Փոքր Ասիայի արևելյան մասում ու Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և ավարտվում է ընդգրկելով ամբողջ երկիրը, որը այնուհետև կոչվում է «Հայք» կամ «Հայաստան», իսկ օտարների մոտ՝ «Արմինա», «Արմենիա»։

Հայ ժողովրդի ձևավորման ընթացքը անցել է չորս հիմնական փուլ և դրանցից յուրաքանչյուրը կապված է պատմական Հայաստանի տերիտորիայի չորս կենտրոնների հետ, որոնք են. ա) Բարձր Հայք՝ Արևմտյան Եփրատի հովտում (Հայասա-Ազզի), բ) Ծոփք-Աղձնիք՝ Արևելյան Եփրատ-Արածանիի և Արևմտյան Տիգրիսի հովիտներում (Արմե-Շուպրիա), գ) Վանա լճի ավազանը (Բիայինի-Արամայր-Հայոց ձոր), դ) Արարատյան դաշտավայր։

Էթնա-լեզվական վերոհիշյալ փոխազդեցությունների ամենահին և հիմնական օղակներից մեկն է Հայասա-Ազզի ցեղային միությունը, որը մ. թ. ա. II հազարամյակի կեսերից սկսած զգալի դեր է կատարում Հայկական լեռնաշխարհի քաղաքական և էթնիկական պատմության բնագավառում։ Ներկայումս գերիշխող է դարձել այն տեսակետը, ըստ որի հայ ժողովրդի ձևավորման համար որպես հիմք ծառայած հնագույն էթնիկական խումբը եղել է ցեղերի քաղաքական այն միավորումը, որը հայտնի է խեթական արձանագրություններից Հայասա-Ազզի անունով։ Ե. Ֆոռերի[4], Գ. Ղափանցյանի[5], Պ. Կրեչ-

---

[3] Ս. Երեմյան, Հայկական լեռնաշխարհի հնագույն ժողովուրդը, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1966, № 10 (247), էջ 19—20։

[4] E. Forrer, Hajassa-Azzi, „Caucasica", Leipzig, 1931, № 9.

[5] Гр. Капанцян, Хайаса—колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1947.

մերի[6] և այլոց հետազոտությունները ապացուցեցին, որ խեթական արձանագրությունների Ḫaḫasa անունից է առաջացել «հայ» ցեղանունը (ḫaḫa կամ haḫo+sa), որը կապվում է խեթա-լուվիական լեզվաշխարհի հետ։

Մեզ հետաքրքրող երկիրը խեթական արձանագրություններում անվանվում է կամ «Հայասա քաղաքի երկիր» կամ «Ազզի քաղաքի երկիր». այստեղից կարելի է եզրակացնել, որ երկիրը կոչվել է իր քաղաքային կենտրոնների անունով։ Թիլ-Հայասա քաղաքը տեղադրվում է հավանաբար հին հայկական Թիլ ավանի տեղում, նախաքրիստոնեական դարաշրջանում այստեղ գտնվում էր Նանե դիցուհու տաճարը։ Այս տեղորոշումը ցույց է տալիս, որ Հայասա երկրի կորիզը և նրա սկզբնական տերիտորիան եղել է հին հայկական եկեղյաց գավառը՝ անտիկ դարաշրջանի Ակիլիսենեն և համապատասխանում է Երզնկայի դաշտին։ Թիլ ավանը տեղադրվում է այդ դաշտի կենտրոն Երիզա կամ Արիզա (հետագայում՝ Երզնկա) քաղաքից ոչ հեռու, որի տեղում, հավանորեն, գտնվելիս է եղել Հայասա երկրի մյուս կենտրոնը՝ Ազզի քաղաքը։ Նախաքրիստոնեական դարաշրջանում այստեղ էր գտնվում Անահիտ դիցուհու պաշտամունքի վայրը։

Հայասա-Ազզի երկրի այս տեղադրությունը ընդունում է հայագետների մեծ մասը[7]։ Սակայն կան և առարկություններ[8]։

Տարբեր տեսակետների առաջացման հիմնական պատճառներից մեկն է հայասական Առիպսա քաղաքի տեղորոշման հարցը, որը ըստ Մուրշիլ Բ-ի (մ. թ. ա. 1345 թ.) տարեգրության, «գտնվում էր ծովի մեջ»։

Խեթական աղբյուրի այս վկայությանը տարբեր մեկնություններ են տրվել. ոմանք գտնում են, որ խոսքը Տրապիզոնի և Կերասունտի շրջակայքի սևծովյան եզերքի մասին է, մյուսները Առիպսան փնտրում էին Վանա լճի ափին[9] կամ Վերին Եփրատի ակունքների մոտ, Կարին-Էրզրումից ոչ հեռու գտնվող ամրության վայրում[10], կամ, վերջապես, Ծովք (Գելջուկ) լճի (որից սկիզբ է առնում Արևմտյան Տիգրիսը) ափին[11]։ Սակայն այս հարցով զբաղվող դիտնականները հաշվի չէին առնում Հայասա-Ազզիի մյուս այն քաղաքների մասին եղած տեղեկությունները, որոնց տեղորոշումը ի վերջո բերում է մեզ նույն Վերին Եփրատի հովիտը։ Այս հանգամանքը հաշվի առնելով, Ն. Ադոնցը հանգել է այն ճիշտ եզրակացության, որ Առիպսա քաղաքը պետք է տեղագրել ներկայիս Դենիզլի գյուղի տեղում, Դիմրիգի (միջնադարյան Տիւրիկէ, Տյուրիկ) քաղաքից ոչ հեռու, Գյոլդաղ լեռնան ստորոտում[12]։ Դենիզլի գյուղը, որի անունը

---

[6] E. Kretschmer, Die nationale Name der armenier Haikh, „Anzeiger der Akad. der Wiss. in Wien, phil.-hist. Klasse", 1932, № 1—7. Հայերեն ամփոփումը տե՛ս «Հանդես ամսօրյա», 1937, № 7—8, էջ 420—432։

[7] Տե՛ս Nicolas Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, էջ 27—41; С. Т. Еремян, К вопросу об этногенезе армян, „Вопросы истории", 1951, № 7, էջ 101—108։

[8] Հայասա-Ազզին Սև ծովի մերձպոնտոսյան ափին են տեղադրել մի քանի հետազոտողներ, որոնց թվումն է նաև Ի. Մ. Դյակոնովը, տե՛ս նրա Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 81—84։

[9] Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա., Երևան, 1944, էջ 32։

[10] Гр. Капанцян, նշվ. աշխ., էջ 59։

[11] Լ. Բարսեղյան, Խայասա-Ազզիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 310—311։

[12] N. Adontz, նշվ. աշխ., էջ 39—40։

Թուրքերեն նշանակում է «ծովագյուղ», գտնվում է ճահճոտ վայրում, որտեղ նախկինում պետք է որ լիճ եղած լինի, այդ մասին է վկայում նաև Գյոլդաղ լեռան անունը, որը թուրքերեն նշանակում է «լճի լեռ»։

Հայասա-Ազզի ցեղային միության մյուս բնակավայրերը ևս տեղորոշվում են Փոքր Հայքի և երբեմն նրա մասը կազմող Բարձր Հայքի տերիտորիայում։ Առիպսայից ոչ հեռու գտնվում էին Դուկկամա կամ Դուկկարամա (ներկ. Դոգան գյուղը, անտիկ Դագոնան) և Զիմառիա (ներկ. Զիմառա) քաղաքները։ Այս բնակավայրերից բացի, խեթական աղբյուրները Հայասա երկրում հիշատակում են Ուռա «քաղաքը»՝ «Հայասա երկրի գլխավոր ամրոցը...»[13]։ Թիլ-Հայասա և Ազզի քաղաքներից հետո երկրի խոշոր կենտրոններից էին Կումմախա կամ Կամմուխա (ներկ. Կամախ)[14] և Ինգալավա-Թարխիզամա (Թորգոմա, հետագայում Թորդան) քաղաքները։ Այս ժամանակաշրջանում պետք է գոյություն ունեցած լինի և հին հայկական Դարանաղի գավառի Անի ամրոց-քաղաքը Եփրատի ափին Anniaca անվան տակ[15], որը գուցե կապ ունի հայասական Աննիա թագավորի անվան հետ։ Երզնկայի գաշտի խոշոր կենտրոններից էր Բիթառիգա քաղաքը (ներկ. Բթառիճ, Ալթին-թեփեի ավերակներից ոչ հեռու), որ այլ կերպ կոչվել է Պաթթեյառիկա։ Այս անունը երբեմն վերագրվում էր ողջ Հայասա-Ազզի երկրին։ Հայասայի քաղաքների թվին էր պատկանում նաև Առնիա քաղաքը, որը տեղադրվում էր անտիկ Առանեի (ներկա Ալաջա-խան) տեղում։

Այսպիսով, սկզբնաղբյուրներից մեզ հայտնի տվյալների հանրագումարը ցույց է տալիս, որ միանգամայն ճիշտ է Հայասա-Ազզի թագավորության տերիտորիայի տեղորոշումը խեթական արձանագրությունների «Բարձր երկրից» (կամ «Վերին աշխարհից») հյուսիս-արևմուտք, հին հայկական Բարձր Հայք նահանգի[16] սահմաններում, արևմուտքում՝ բուն Փոքր Հայքի տերիտորիայի ընդգրկմամբ։ Այդ ընդարձակ ցեղային միության կենտրոնական շրջանները գտնվում էին անտիկ աղբյուրների Ակիլիսենեում, որն ընդգրկում էր հին հայկական Եկեղյաց, Դարանաղի-Աղիվ և Մուզուր գավառները։ Խեթերի և հայասացիների միջև ընդհարումները տեղի էին ունենում գերազանցապես Փոքր Հայքի հողերի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում ընկած տերիտորիաներում, Հալիս և Գայլ գետ (Լիկոս) գետի ակունքների շրջանում։ Զգալիորեն ավելի ուշ, երբ Հայասա-Ազզին կազմող երկրների միությունը արդեն գոյություն չուներ, Հեկատայոս Միլետացին (մ. թ. ա. VI դ.), այնուհետև Դիոդորոս Սիկիլիացին (մ. թ. ա. շուրջ 90—21 թթ.) վկայում են. մեկը՝ արմենական լեռան (Ἀρμένιον ὄρος), որտեղից բխում է Հալիս գետը և մյուսը՝ խոյերի ցեղի գոյության մասին հետագայում Տայք անունով հայտնի նահանգի տերիտորիայում։ Այս խոյ ցեղանվան հիմքում թերևս նշմարվում է նույն «Հայասա» անունը՝ առանց լուվիա-խեթական «-սա» վերջավորության։

---

13 Պետք է ճիշտ լինի Գ. Ղափանցյանի առաջարկած տեղադրումը Երզնկայի դաշտում Ալթին-թեփեի ավերակների վայրում, ավելի ուշ շրջանի Զիմին-Ծումինա կենտրոնից 4 կմ հարավ։ Տե՛ս Гр. Капанцян, նշվ. աշխ., էջ 63։

14 E. Forrer, նշվ. աշխ., էջ 1—2։ Гр. Капанцян, նշվ. աշխ., էջ 18—19։

15 Մի ուրիշ Anniaca քաղաք էլ գոյություն է ունեցել Թերմոդոնտ-Գայլ գետի (ներկ. Կելկիտ-չայ) ափին, անտիկ Կողոնիայի տեղում (ներկ. Կոյուլ-Հիսար)։

16 Կարելի է ենթադրել, որ «Բարձր Հայք» անունը առաջացել է խեթական «Բարձր երկիր», «Վերին աշխարհ» անվան նմանությամբ։

Բուն Հայասա-Ազզին (Եկեղյաց-Ակիլիսենեն) հյուսիսում սահմանակից էր բալա||պալա (Գայլ գետի վերին հոսանքի շրջանը) և թումմանա (անտիկ Դոմանայի, ներկ. Թումնա գյուղի շրջանը, Բաբերդից արևմուտք, Ճորոխ գետի հովտում) ցեղերի երկրներին։

Հայասա-Ազզի տերմինը Վերին Եփրատի հովտի հնագույն անվանումն է, որ հայտնի է մեզ սկզբնաղբյուրներից։ Այս ցեղային միության քայքայումից և խեթական պետության անկումից (մ. թ. ա. շուրջ 1200—1190 թթ.) հետո Հայասա-Ազզին այլևս չի հիշատակվում։ Ամենայն հավանականությամբ Երզընկայի դաշտի կենտրոններ Թիլ-Հայասա և Ազզի քաղաքներն ավերվել էին և նրանց փոխարեն առաջացել էին այլ կենտրոններ, որոնց անունով էլ պետք է որ կոչվեր երկիրը։ Այդպիսի կենտրոններից մեկն էր լինելու վերը հիշատակված Բիթաուիգա (ներկ. Բթաուիճ) քաղաքը (կոչվել է նաև Պաթթեյաուիկա)։ Հետագայում Հայասա-Ազզի երկրների համադաշնակցության մեջ առաջատար դեր է կատարում հին հայկական Դարանաղի գավառի տերիտորիան, որը խեթական աղբյուրներում կոչվում է Կումմախա կամ Կամուխա իր գլխավոր կենտրոնի անունով (ներկ. Կամախ գյուղը)։ Ավելի ուշ, ուրարտացիների առաջխաղացման ժամանակաշրջանում (մ. թ. ա. VIII դար) կենտրոնը Թարխիգամա (հետագայում՝ Թորդան գյուղ) քաղաքն էր, այդ պատճառով ամբողջ գավառը ևս կոչվում էր Թարխիգամա, բայց այդ այն ժամանակ էր, երբ հայկական ցեղերի կենտրոնը տեղափոխվել էր հարավ՝ Խարբերդի դաշտը։

Հավանական է, որ վրացական աղբյուրների միջոցով մեզ հասած «Անձիան» կամ «Անձիա»[17] տեղանուն ունեցել է նաև «Ազնի»-ան զուգահեռ ձևը, որի հետ համընկնում է Ազնցիք անվանումը։ Այս անվանումների հետ պետք է որ կապ ունենա մինչև օրս հայ ժողովրդական էպոսում պահպանված «Ազնանց տուն» առասպելական երկրի անվանումը, այդ անունով է, որ Բարձր Հայքի և Ներկայիս Դերսիմի ու Սասունի մեգալիթյան հուշարձանները ժողովուրդը կոչում է «Ազնաբերդ»[18]։

Այս բոլոր անվանումները, հավանաբար, Ազզի երկրի անվան ուշ ժամանակի ձևերն են[19]։

---

17 XI—XII դդ. վրացական աղբյուրներում հիշատակվում են իրար կողքի Անձորեթի կամ Անձիանձորա, Եկլեցի և Դաստերի «քաղաքները», որոնցից առաջինում նշվում է «Մեծ վարդապետ Գրիգորի գերեզմանը» և նկատի ունի Թորդան գյուղը, երկրորդը Եկեղյաց գավառն է, իսկ «Դաստերին» հայտնի Դաստեյրա ամրոցն է (Դաստարակ, այժմ՝ Դոստալի գյուղ Ջիմարայի մոտ)։ Ինչպես տեսնում ենք, «Անձիանձորա»-ն համապատասխանում է Թորդան-Թարխիգամա վայրին և խեթական աղբյուրների «Ազզի» երկրին։ Տե՛ս ქართლის ცხოვრება, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყაუხჩიშვილის მიერ, ტ. I, თბილისი 1955, էջ 160։

18 Այս տեսակետից պատահական չէ, որ Հայասայի երկրորդ անվանումը կապվում է հայերի «ազն» (սեռ. հոլ.՝ ազին՝ «ժողովուրդ, ցեղ, սերունդ, տոհմ, ազգակցություն») բառի հետ։ Գրաբարում սովորաբար օգտագործվում է հոգնակի «ազինք» ձևով։ Այս բառարմատից է ծագում ազնիվ՝ «տոհմիկ», «ազնվատոհմ» բառը։ Տե՛ս Г. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, էջ 78։

19 Ըստ Լ. Բարսեղյանի (նշվ. աշխ., էջ 310) մեզ հասել են ուշ շրջանի հիշողություններ Ազզի երկրի մասին. XVII դարի հայտնի հեղինակ Հակոբ Կարնեցու մոտ հիշատակվում է «Ղուռուչան գաւառ. որ ի գրոց Ազնցիք ասեն» (Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դարերի, հատ. Բ, Երևան, 1956, էջ 552)։

Hajasa անվանումը «բացահայտորեն համահնչուն է հայերի ազգային անվան հետ, որոնք իրենց կոչում են եզակի՝ «հայ», հոգնակի՝ «հայք», իսկ իրենց երկիրը՝ «Հայք» («հայ» անվան հոգնակի թվից, որ փոխանցվել է հայերի զբաղեցրած տերիտորիային) կամ «Հայաստան»[20]։

Անդրադառնալով Հայասա երկրի տեղադրության խնդրին, անհրաժեշտ է ուշքի առաջ ունենալ Հ. Մանանդյանի այն պնդումը, որ «Ուռա, Ինգալավա, Սոիպսա, Դուկամա քաղաքների տեղադրման հետ է կապված Հայասա-Ազզի թագավորության տեղորոշման հարցի լուծումը»[21]։ Սակայն այդ երկրի և նրա բնակավայրերի Հ. Մանանդյանի առաջարկած նոր տեղադրությունը լուրջ քննադատության չի դիմանում և ի վիճակի չէ սասանելու Հայասա-Ազզիի տեղադրության մասին Ֆոռերի հայտնած կարծիքը, որը հաստատորեն տեղ է բռնել արևելագետների աշխատություններում։

Ն. Գ. Ադոնցի ուշադրությունը գրավել էր այն ընդհանրությունը, որ գոյություն ունի Հայասա-Ազզի երկրի և Արևմտյան ու Արևելյան Տիգրիսի ավազանում ընկած շրջանների ցեղանունների, տեղանունների և անձնանունների միջև։ Նա մասնավորապես գտնում է, որ եթե Alzi-ն նույն Azzi-ն չէ, ապա համենայն դեպս նա Purulumzi-ի հետ միասին պատկանում է նույն Azzi ժողովրդին[22]։ Alzi||Alše շրջանը նույնական է ասորեստանյան Enzitu||Anzitu-ին և հին հայկական Անձիտին (Anzitenae)՝ հարևան գավառների ընդգրկմամբ։

Ավելի ուշ այս անունը Alzini ձևով տարածվում է ասորեստանյան սեպագրերում հիշատակվող Շուպրիա երկրի ողջ տերիտորիայի վրա և համապատասխանում է հին հայկական Աղձնիք նահանգին։ Վերջինից դեպի արևելք, Արևելյան Տիգրիսի ակունքների շրջանում գտնվում էր հին հայկական Անձավացիք գավառը, որի անունը ծագում է նույն Alzi||Anzi||Anzawa||Arcawa-ից։ Հետաքրքրական է, որ միջին դարերում այդ գավառը կոչվում էր նաև Աղզի[23]։

Alše ցեղային միության սահմաններն այդ շրջանում հավանորեն հասնում էին մինչև Քաշշիարի լեռները (Մասիուս-Տուռ-Աբդին)։ Միտանիի անկումից հետո նրա հյուսիսային շրջանները մտնում են Ալշե երկրի կազմի մեջ։ Այս նույն ձևով ընդարձակվում է Իշուվա երկիրը։ Խեթական Թութխալիաս IV թագավորը (1250—1220) իր երկրին է միացնում Ugasta շրջանը, որը, հավանորեն, կոչվել է նաև Զուխմե||Սուխմե, տեղադրվում է Արածանիի վտակ Գայլ (այժմ՝ Մուզուր-սու) և Մեծ Գայլ (այժմ՝ Քըղի-սու) գետերի ավազանում։ Արածանիի հյուսիսային ափին, այն գետանցի մոտ, որտեղ ուշ շրջանում գտնվում էր Արշամաշատ քաղաքը (ներկ. Խարաբա-Նաջարան ավերակները այդ գետի հարավային ափին), պետք է գտնվելիս լիներ խեթական աղբյուր-

---

20 Г. Б. Джаукян, նշվ. աշխ., էջ 10։

21 Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, էջ 100։

22 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 50։

23 Ներկայումս հին Անձավացիքի տերիտորիայում պահպանվել է մի գյուղ Աղսու իմաստավորված անվամբ։ Աղզի գյուղը հիշատակվում է Անձևացիք գավառում՝ հայ պատմիչ Թովմա Արծրունու մոտ։ Տե՛ս «Թովմայ վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», ՍՊ, 1887, Դ, ԻԲ, էջ 143, 260։ Մեր կարծիքով պատահական չէ, որ բերվող զուգահեռները գիտվում են այն տերիտորիաներում, որոնք ամենից շատ են ներգրավվել հայացման ընդհանուր պրոցեսի մեջ։

ների Ուզաշտա քաղաքը, ուրարտական արձանագրությունների Ուաշտալը[24]։ Որոշ ուսումնասիրողներ «սոմեխի» էթնիկական տերմինը, որ վրացերեն նշանակում է «հայ», արտաբերում են Զուխմե||Սուխմե երկրի անունից, բայց դա բոնապրոսիկ բացատրություն է և այլ տվյալներով չի հաստատվում[25]։

Հայասա-Ազզի, Իշուվա, Ալշե||Ալզի և Զուխմե||Սուխմե երկրների տեղորոշումը միանգամայն համահնչուն է Շուպպիլուլիումա թագավորի (1380—1346) «Տարեգրությունների» տվյալներին, որոնք հաղորդում են, թե Հայասան սահմանակից էր Զուխմե, Իշուվա և Ալշե երկրներին։

Հայասա-Ազզի երկրների միության տրոհումից հետո (1200—1130), երբ հյուսիսից ու հյուսիս-արևմուտքից ակտիվանում է կասկեական-աբեշլական ցեղերի, իսկ այնուհետև (մ. թ. ա. VIII դարից)՝ Եփրատ գետի վերին հոսանքի շրջանը կրաղեցրած քարթվելական ցեղերի շարժումը դեպի հարավ, հայասական ցեղերի մի մասը անջատվում է իր համացեղայիններից։ Հայասացիների հետ կապ պետք է ունենա Դիոդորոս Սիկիլիացու հիշատակած (XIV. 29) Χαοι և Ստեփաննոս Բյուզանդացու Χοῖ անունները կրող ցեղը, որը բնակվելիս է եղել փասիանների[26] կողքին կամ բեխիրներին հարևան Պարխարյան լեռներում[27]։ Հավանաբար, պատահական չէ, որ խոյերի փոխարեն Քսենոփոնը իր «Անաբասիս»-ում (IV, 6, 5) հիշատակում է տաոխներին, այսինքն հին հայկական Տայք նահանգի բնակիչներին։ Ամենայն հավանականությամբ Ταοχοι և Χοῖ էթնոնիմները գտնվում են նույն փոխհարաբերության մեջ, ինչ նրանց հայերեն Տայք և Հայք (սեռ. հոգ. հոլ.՝ Տայոց-Հայոց, բարբառային՝ Տաւուց-Հաւուց)[28] համարժեքները։ Ասվածը հիմք է տալիս ենթադրելու, որ ասսուրա-բաբելական Դայաենի և ուրարտական աղբյուրներում Դիաուեխի[29] ձևով հիշատակվող ցեղային միությունը, որ գոյություն է ունեցել մ. թ. ա. XI—IX դարերում, Հայասա-Ազզի ցեղային միության ժառանգորդն է։

Χοῖ էթնիկական տերմինը մյուս անտիկ աղբյուրներում հանդես է գալիս Κωιτης, Χοτηνοι և Ἀχαιοι ձևերով։ Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում վերջին՝ Ἀχαιοι տերմինը։ Այդ ցեղը անտիկ աղբյուրներում վկայված է Սև ծովի հարավային և հյուսիս-արևելյան ափերին, գերիշխող աբխազաադըղեական էթնիկական աշխարհի շրջապատում։ Այդ «աքայացիները» հե-

---

24 Սալմանասար III-ի (859—824) Տուշխանից գտնված մոնոլիթի վրայի արձանագրության մեջ կարդում ենք. «Ես դուրս եկա Էնզիտից, անցա Արծանիա գետը և մոտեցա Սուխմա երկրին, դրավեցի Ուաշտալը, նրա ամրացված քաղաքը...»։ АВИИУ, № 27 (II, 45), ВДИ 1951, № 2, էջ 296։

25 Г. А. Халатьянц, О некоторых географических названиях древней Армении в связи с данными ванских надписей, „Древности Восточные. Труды Восточной Комиссии Имп. Археол. Об-ва", том II, вып. II, 1901, էջ 126։

26 Այս ցեղային անունը պահպանվել է հին հայկական Բասեան || Բասեն գավառի անվան մեջ։

27 Հետազոտողներից ոմանք համարում են, որ այս ցեղանունները դրչագրական սխալի հետևանք են և պիտի Ταοχοι անվան երկրորդ մասնիկը լինեն։ Տե՛ս „Вестник древней истории", 1947, № 4, էջ 260, ծան. 2 և Я. А. Манандян, О некоторых спорных проблемах..., էջ 75։

28 Վերջիններից պետք է ծագած լինի Տայքին (տաոխների երկրին) և Բասենին (փասիանների երկրին) հարևան Հավնունիք նախարարական տան գավառի անունը։

29 Պետք է հաշվի առնել, որ ուրարտական սեպագրերում O-ի համար առանձին նշան չկար։ և նա հաղորդվում էր U-ի միջոցով։

լենիստական-հռոմեական դարաշրջանում հանդիպում են Պոնտոսում և ներկայիս Սոչիի շրջանում։ Ապրելով աբխազա-ադըղեական ցեղերի մեջ, նրանք հետագայում պետք է ձուլվեին վերջիններիս։ Խոյերի այն մասը, որ մնացել էր Ճորոխի հովտում, ներգրավվել է հայերի համախմբման ընդհանուր պրոցեսի մեջ, դառնալով ձևավորվող հայ ժողովրդի հիմնական բաղադրիչներից մեկը։

Հաճախ Կիղզվատնա երկրների խմբավորման կազմումն էին լինում Թեգարամմա և Մալդիա խուրրիական երկրները, որոնք գտնվում էին Կանեշ-Աշշուր հնագույն քարավանային ճանապարհի մեծ մայրուղու վրա։

Մ. թ. ա. III հազարամյակը վաղ բրոնզի արդյունագործության ծաղկման շրջանն էր և Հարավային Միջագետքի արգավանդ, ողողվող մարգագետիններում առաջացած քաղաք-պետությունները առևտրական կապեր հաստատեցին Իրանական բարձրավանդակի արևմտյան ծայրամասի, Հայկական լեռնաշխարհի հարավային ծայրամասի և Փոքր Ասիայի հարավ-արևելյան մասի (որոնք հայանի էին պղնձի, արճիճի, անագի և արծաթի հանքերով) ցեղապետների հետ։ Մ. թ. ա. III—II հազարամյակների սահմանագլխին արդեն Աշշուր քաղաքի ակկադացի վաճառականները, որոնք միջնորդ առևտուր էին վարում Շումերի և խեթերի միջև, հիմնում են իրենց առևտրական գաղութ-ֆակտորիաները. սրանք առևտրական սերտ կապեր են հաստատում շրջակայքի ցեղերի ու ժողովուրդների և առաջին հերթին՝ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանների ու Փոքր Ասիայի արևելյան մասի բնակիչների հետ։ Միջազգային այս փոխանակության մեջ կապող օղակների դեր էին խաղում քաղաքային համայնքները (որոնք շուտով դառնում են քաղաք-պետություններ)՝ Կանեշը, Արմատանա-Արմասը (հավանորեն ներկայիս Պալաս գյուղի շրջակայքը, Կեսարիայից հյուսիս-արևելք)[30], Կումմանուն (անտիկ դարաշրջանի Ոսկե Կոմանան), Թեգարամման (ներկայիս Գյուրյունը, անտիկ դարաշրջանի Գաուրենեն), Մալդիան (ներկ. Մալաթիան, անտիկ դարաշրջանի Մելիտինեն), որ աճել էր Եփրատի գետանցից ոչ հեռու, Ամեդուն կամ Մագանին (ներկ. Դիարբեքիրը, անտիկ դարաշրջանի Ամիդան) Տիգրիսի վրա, Վաշշուգանեն կամ Աշշուկանեն (ներկ. Թել-Բաշ), Կալխու-Լարիսան (ներկ. Նեմրուդը, ասսուրա-բաբելական աղբյուրների Կալախը) և Աշշուրը (ներկ. Շարգատը), որը Տիգրիսի վրայով կապ էր պահպանում Ակկագի և Շումերի քաղաքների հետ։ Շուտով առևտրական այս մայրուղին գրավում են խուրրի-միտանացիները, որոնց ստեղծած հզոր տերությունն իր գոյությունը պահպանեց մ. թ. ա. XVII—XV դարերում։ Միտանիի հզորությունը խորտակեցին խեթերը։

Փոքր Ասիայի արևելյան մասի քաղաք-պետությունները, որ հիմնվել էին առևտրական այս մայրուղու վրա, ծագումնաբանորեն կապված էին Հայասա-Ազզի ցեղային միության հետ և Կիղզվատնայի երկրների խմբավորման հետ միասին խեթական տերության կազմի մեջ էին գտնվում։ Նրանց միջ առաջինը Թեգարամմա քաղաք-պետությունն էր։ Խեթական արձանագրությունների Թեգարամմա քաղաքը, որը համապատասխանում է ասսուրա-բաբելական

30 Խեթական արձանագրությունների Armatana երկիրը կապվում է լուսնի աստված Apmasa-ի հետ, որին նվիրված սրբավայրը պետք է տեղադրել Պետինգերյան քարտեզի Armaza կայարանի տեղում (այժմյան Պալաս գյուղի մոտերքը)։ Պտղոմեոսը (V, 6, 14) հիշատակում է այս վայրը Ἄρχαμα, Ἀρχαλλα, Ἀρχαλα աղճատված ձևերով։

աղբյուրների Թիլ-Գարիմմուին (անտիկ աղբյուրների Gaurenae, ներկ. Գյուրյուն), այդ պետության մայրաքաղաքն էր։ Թեգարամմա երկիրը նույնացվում է բիբլիական Թոգարմայի հետ, Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ՝ «Տուն Թորգոմայ» (Գիրք Ծննդոց, X, 3։ Գիրք Մնացորդաց, Ա, I, 5—6։ Եղեկիել, XXVII, 13, XXXVIII, 6)։ Հայ պատմական ավանդության մեջ «Թորգոմայ տունը» համարվում է Հայաստանի հոմանիշը, իսկ հայերը անվանվում են «Թորգոմեան», «Թորգոմածին»։

Արևելքում Թեգարամման իր մեջ էր առնում Պախխուվա «երկիրը» (ներկ. Արաբկիր քաղաքի շրջանը) և հավանաբար Թեբուրզիա կամ Թեբուրզի (ըստ խեթական և ասորեստանյան աղբյուրների) «երկիրը»։ Այն տեղորոշվում է Եփրատի աջ ափին, այժմ Յաղջի-չայ կոչվող վտակի հովտում։ Պախխուվայի և Թեբուրզիայի միջոցով Թեգարամման Եփրատով սահմանակից էր Իշուվային, որը գտնվում էր հետագա Ծոփքի տերիտորիայում։ Իշուվայի և Միտանիի վրա արշավելիս խեթերը անցնում էին Թեգարամմայի և Մելիդուի վրայով։ Վերջինիս մոտ էր գտնվում Եփրատի գլխավոր գետանցը։ Հաճախ նույն Թեգարամմայի վրայով խեթերը ներխուժում էին Հայասա-Ազզի երկրների համադաշնակցության թիկունքը։ Կանեշ-Աշշուր առևտրական մեծ մայրուղու վրա գտնվող մյուս քաղաք-պետությունը Մելիդուն էր կամ Մալդիան։ Նրա մայրաքաղաքը՝ Մալդիան (Մելիդա, Մելիտա, անտիկ Melitenae, ներկ. Էսկի-Մալաթիա), գտնվում էր Եփրատի գլխավոր գետանցի Ուրշա կամ Ուրուսսա (Պատինգերյան քարտեղի adAras, ներկ. Փորուտ գյուղից ոչ հեռու) քաղաքի մոտ, Եփրատի գիմացի ափին գտնվում էր գետանցի մյուս ծայրը՝ Տումեիշկի քաղաքը, որը հետագայում հայտնի էր ուրարտական աղբյուրներից (ներկ. Իզոլու գյուղը, անտիկ դարաշրջանի Տոմիսան)։ Երրորդ քաղաք-պետությունը՝ Կումմուխը կամ Կումմախան (անտիկ դարաշրջանի Commagenae) առաջացավ Մալդիայից հարավ, Եփրատի աջ ափին։ Նրա մայրաքաղաքը՝ Կումմախան (անտիկ դարաշրջանի Սամոսատ, ներկ. Սումեյսատ), գտնվում էր Եփրատի այն գետանցի մոտ, որի նշանակությունը հատկապես մեծացավ հետագայում։

* * *

Հայասա-Ազզիի մասին տեղեկությունները վերանում են խեթական պետության վերացումից հետո, որ տեղի ունեցավ մ. թ. ա. 1200—1190 թթ. և հետևանք էր հնդեվրոպական նոր ցեղերի տեղաշարժերի՝ արևմուտքից դեպի արևելք։ Այդ գերազանցապես թրակա-փռյուգական ցեղերի տեղաշարժն էր։ Սրանք էին, որ հիմնական գործոն դարձան հայ ժողովրդի ձևավորման արագացման ընթացքում։

Մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսին մեծ թափ է ստանում ցեղերի տեղաշարժը Էգեյան աշխարհից և Բալկաններից դեպի Փոքր Ասիա, Լևանտի ծովեզերք և նույնիսկ Նեղոսի դելտա՝ Եգիպտոս։ Եգիպտական աղբյուրներում բոլոր այս հարձակվող ցեղերը կոչվում են «ծովի ժողովուրդներ»։

«Ծովի մարդկանց» թվում հանդես են գալիս նաև բազմաթիվ թրակա-փռյուգական ցեղեր, որոնք Փոքր Ասիա էին թափանցում Բալկանյան թերակղզու հյուսիսային մասերից՝ մերձդանուբյան շրջաններից ու թերևս մասամբ՝ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կողմից։

Թրակա-փռյուգական ցեղերի այս տեղաշարժը կատարվել է մի շարք ալիքներով, որոնք ժամանակագրական տեսակետից կարելի է բաժանել եր-

կու խմբի՝ նախքան Տրոյական պատերազմը (մ. թ. ա. XII դարի վերջ) և դրանից հետո։

Փոքր Ասիա տեղափոխված թրակա-փռյուգական ցեղերի մեջ առաջիններից էին արիմները (ἀριμοί) նախահայերենի կրողները, որոնք աղբյուրների կցկտուր տեղեկությունների համաձայն, տեղավորվել են Փոքր Ասիայի կենտրոնական և հարավ-արևմտյան մասերի մի շարք վայրերում։

Ըստ «Իլիականի» (II, 783), նրանք ապրելիս են եղել Արգեոս լեռան և Մաժաք (Կեսարիա) քաղաքի շրջակայքում։ Հայերի նախնիներին այս տերիտորիայում հիշում է նաև հայ ազգային ավանդությունը։

Լեզվի և պատմական գրականության տվյալները ևս ցույց են տալիս, որ հայերի հնդեվրոպական նախնիների մի ճյուղը երկարատև շփման մեջ է եղել փոքրասիական և էգեյան ցեղերի ու ժողովուրդների ու հատկապես տրոյացիների հետ[31]։

Թրակական ծովեզերքից Փոքր Ասիա տեղափոխվելիս փռյուգական ցեղերը նախ և առաջ պետք է ընդհարվեին այն ժամանակ դեռ հզոր Տրոյական տերության հետ, որը Միքենեի և խեթական թագավորության մրցակիցն էր։ Մ. թ. ա. II հազարամյակի կեսերին այդ ցեղերը, Մարմարա ծովի փոքրասիական ափը տեղափոխվելով, հայտնվում են Տրոյական պետության սահմաններում, և նոր տեղում նախահայերենը սերտ շփման մեջ է մտնում տրոյա-էտրուսկյան[32] և խեթա-լուվիական լեզուների հետ։

Փռյուգական ցեղերի մի այլ ալիք Պրոպոնտիսի (Մարմարա ծովի) թրակական ափից ասիական ափ է անցել այսպես կոչված դորիական գաղթի ժամանակաշրջանում, այսինքն՝ մոտավորապես XII դարի սկզբին։ Ստրաբոնը (XIII, 1, 8) հաղորդում է, որ լիկիացիներից, կիլիկեցիներից և այլ ցեղերից ավելի ուշ Տրոադայում հայտնվում են փռյուգացիները, թրակացիները և տրերները։

Տրոյան, ըստ հունական պատմական ավանդության, եղել է Միքենեի գլխավոր մրցակիցը Փոքր Ասիայում։ Նա հսկում էր մուտքը դեպի Հելեսպոնտոսի նեղուցն ու Սև ծովը և առևտրական կապեր էր պահպանում ողջ արևելյան միջերկրածովյան ավազանի երկրների հետ և, հատկապես, աքայան (միքենյան) Հունաստանի հետ։ Տրոյան պետք է մշակութային և քաղաքական կապեր ունեցած լինի նաև խեթական թագավորության հետ։ Այդ հզոր պետությունը չփմացավ թրակա-փռյուգական ցեղերի ճնշմանը։ Հնագիտորեն հաս-

---

31 Հերոդոտի ռուսերեն թարգմանության ծանոթագրություններում Ֆ. Գ. Միշչենկոն փռյուգացիների առիթով գրում է. «Փոքրասիական թերակղզում փռյուգացիների բնակավայրերի խոր հնությունը, ինչպես նաև նրանց ազգակցությունը մի կողմից արմենների և մյուս կողմից՝ հելլենների հետ, ամեն կասկածից վեր է. այս ժողովուրդների միջև եղած միջանկյալ օղակները պետք է համարել միսիացիներին, մեոններին, միգդոններին, գոլիոններին, տրոյացիներին»։ Геродот, История в девяти книгах. Перевод с греческого Ф. Г. Мищенко, т. II, М., 1888, էջ 607։

32 Վ. Ի. Գեորգիևի պրպտումները բերում են այն եզրակացության, որ «էտրուսկերենի հնչյունական կառուցվածքը շատ նման է հայերենի կառուցվածքին», իսկ էտրուսկերեն որոշ բառեր իրենց ճշգրիտ համապատասխանությունն ունեն հայոց լեզվում»։ Նույն հեղինակը ենթադրում է, որ «հայերի նախնիները բնակվել են տրոյացիների մոտերքը ինչ-որ տեղ»։ Հունական պատմական ավանդությունը հաստատում է Վ. Ի. Գեորգիևի այս եզրակացությունը (В. И. Георгиев, նշվ. աշխ., էջ 194)։

տատված է, որ Տրոյան մ. թ. ա. XII դարում կործանվել է հրդեհից, դա համապատասխանում է հոմերոսյան էպոսի տվյալներին, ըստ որոնց միքենյան հույները գրավում են Տրոյա-Իլիոնը և հրկիզում։ Տրոյա VII-ա-ի ավերակների վրա ստեղծվում է Տրոյա VII-բ բնակավայրը՝ միանգամայն այլ բնակչությամբ։ Հատկապես անհրաժեշտ է նշել, որ այստեղ երևան է գալիս կենտրոնական-եվրոպական և մերձդանուբյան ծագում ունեցող այսպես կոչված «ելունդային խեցեղենը» (Buckelkeramik)[33]։ Ըստ երևույթին, Տրոյայի կործանումից հետո Տրոադայի տերիտորիայում հաստատվել են փռյուգացիները և այնուհետև անտիկ դարաշրջանում այդ երկրամասը կոչվում է Հելլեսպոնտական կամ Փոքր Փռյուգիա։

Ենթադրվում է, որ խեթական թագավորությունը ևս կործանվել է փռյուգացիների հարվածներից, որոնք գրավեցին նրա ողջ տերիտորիան։ Այն տրոհվեց մանր պետական կազմավորումների։ Պետք է հաշվի առնել, որ խեթական թագավորությունը հարկադրված էր պայքարել նաև արևելքում՝ Պոնտոսի և Անտիտավրոսի անտառապատ ձորերում բնակվող նախախեթական ցեղերի դեմ։ Այսպես, խեթական Թութխալիաս IV թագավորի (շուրջ 1250—1220 թթ.) տարեգրություններում կարդում ենք, որ Ասսուվայի դեմ նրա ձեռնարկած արշավանքի ժամանակ արևելքից կրկին սկսել են հարձակումներ գործել կասկերը։ Այդ ժամանակ է (XII դարի սկզբին), որ քայքայվում է Հայասա-Ազզի ցեղային միությունը, ապա ընկնում է նաև խեթական պետությունը։ Փռյուգական ցեղերը հաստատվել էին Սանգարիա գետի հովտում և այնտեղից շարժվում էին դեպի Հալիս գետի հովիտն ու Անտիտավրոսի շրջանը։ Հալիս գետի հովտում փռյուգական այս ցեղերը պիտի հանդիպեին իրենցից առաջ այդտեղ հաստատված իրենց ցեղակից արիմներին (ուրումեացիներին), որոնց հետ միասին, ինչպես նաև տեղաբնիկ նախախեթական այլ ցեղերի հետ անցան Եփրատը և ներխուժեցին (մ. թ. ա. 1165 թ.) Ասորեստանի տիրապետության տակ գտնվող Շուպրիա երկիրը՝ Արևմտյան Տիգրիսի հովտում։

Ասորեստանի սահմանները ներխուժող այդ ցեղերը ասսուրա-բաբելական արձանագրություններում կոչվում են muśku, muškaya և, ըստ երևույթին, իրավացի են այն ուսումնասիրողները, որոնց կարծիքով մուշկերը միղիացիներն են (Μύσοι), որոնց անունով էլ Տրոյա քաղաք-պետության երկրամասը կոչվեց Միղիա (Μυσία)։ Թրակա-փռյուգական ցեղերից, արիմ-արմեններից հետո, հավանաբար, միսիացիներն էին, որ գաղթեցին Փոքր Ասիայի կենտրոնական շրջանները, և նրանց անունով էլ ասորեստանցիները և Առաջավոր Ասիայի մյուս ժողովուրդները թրակա-փռյուգական լեզվախմբի բոլոր հնդեվրոպական ցեղերին անվանում էին մուշկեր[34]։ Ինչպես այժմ պարզվում է, «մուշկերի» տակ հասկացվում էին ոչ միայն փռյուգացիները, այլև նախահայերենով խոսող ցեղերը (արիմները, ուրումեացիները)։

Թրակա-փռյուգական ցեղերի անցած ողջ ճանապարհն ուղենշված է փռյուգական տիպի դամբարանաբլուրներով։ Դրանց յուրօրինակ նյութական մշակույթը նույնական է Տրոյայի, Աքսիոս գետի հարթավայրի կամ Սալոնիկի

---

[33] И. М. Дьяконов, Предыстория армянского народа, էջ 117։

[34] Ի. Մ. Դյակոնով, Խեթերը, փռյուգացիները և հայերը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), Երևան, 1956, № 11, էջ 71։

հարթավայրի մշակույթի հետ[35]։ Այստեղից այդ դամբարանաբլուրները ձգվում են դեպի փոքրասիական ծովեզերքը՝ Տրոադա և շարունակվում, ինչպես ցույց է տվել Ն. Ադոնցը[36], Մալաթիա—Խարբերդ—Դիարբեքիր—Սասուն գծով, Աքսիոս գետի հարթավայրից մինչև Բոզ-հյուլուկ. այդ դամբարանաբլուրների համար բնորոշ է մասնավորապես δεπας ἀμφικύπελλον և schnabelkanne տեսակների խեցեղենը։ Այս երկուսն էլ հատուկ են Տրոյայի խեցեղենին[37]։

Հոմերոսյան էպոսի ստեղծման շրջանում (մ. թ. ա. X—XI դդ.) նախահայկական ցեղերից մեկը՝ արիմների ցեղը[38], հայտնի էր հույներին մի շարք վայրերում՝ Աքսիոս գետի հովտում, Միսիայում՝ միսիացիների և փռյուգացիների կողքին՝ Կատակեկավմեն շրջանում, Հիդա գետի հովտում, Եփեսոս քաղաքի շրջակայքում[39], Կիլիկիայում՝ Կալյուկադնոս գետի հովտում, ուր գտնվում են «Արիմների լեռները», Օրոնտեսի գետաբերանի մոտ՝ Անտիոքի շրջանում և, վերջապես, Կապադովկիայի Արգեոս լեռան շրջակայքում, որտեղ տեղադրվում է հայ ազգային ավանդության «Պոոտին Արմենիան»՝ «Առաջին Հայքը»։ Բոլոր այդ վայրերի հետ է կապվում նաև Հրաշունչ լեռան և Տյուփոն հրեշի առասպելը։ Այս առասպելը, որ գոյություն ուներ և՛ Միսիայի, և՛ Լյուդիայի սահմանի մոտ, և՛ Կիլիկիայում, և՛ Օրոնտեսի գետաբերանի շրջանում, և՛ Արգեոս լեռան շրջակայքում, կապվում է, ուրեմն, արիմների ցեղերի հետ։

Հրաշունչ լեռան (որի տակ, ըստ առասպելի, թաղվել է հրեշ Տյուփոնի դիակը՝ Զևսից պարտվելուց հետո) տեղորոշումն Արգեոս լեռան շրջանում գերմանացի գիտնական Մարկվարտին թույլ է տվել ենթադրելու, որ ի դեմս ἀριμοι ցեղի հնագույն հիշատակությունն ունենք արմենների մասին։ Ի հաստատումն իր ենթադրության նա վկայակոչում է այն փաստը, որ հայկական առասպելներում պահպանվել է Զևսի և Տյուփոնի առասպելի տարբերակը. դա արմենների ցեղապետ Արամի և Պայապիս Քաաղեայի կռվի մասին զրույցն է, որ մեջ է բերում Մովսես Խորենացին (Ա, ԺԴ)։ Պատահական չէ, որ հայկական առասպելի համաձայն Արամի և Պայապիս Քաաղեայի կռիվը տեղի է ունեցել հենց այդ նույն վայրում՝ Մաժակ-Կեսարիայի շրջանում, Հրաշունչ Արգեոս լեռան ստորոտում։

---

35 Տե՛ս D. Fimmen, Die Kretisch-mykenische Kultur, Leipzig, 1929, էջ 103։

36 Տե՛ս Zeitschrift fur Ethnologie, 1901, էջ 181։

37 Влад Бэнэцяну, Некоторые вопросы этногенеза армян, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1961, № 2, էջ 103։

38 Հելլենիստական դարաշրջանում ἀριμοι էթնիկական անունը վաղուց արդեն փոխարինվել էր ավելի զարգացած ἀρμένιοι անունով, այդ պատճառով էլ գրականության մեջ հանդիպող ἀριμοι-ն սովորաբար նույնացնում էին ἀραμαῖοι-ի հետ, որը նշանակում էր արամեացիներ։ Առաջին այդպիսի սիալը կատարել է Ստրաբոնը։ Նա արիմներին (XII, 3, 28) մատնացույց է անում ծովեզրյա Կիլիկիայում՝ Կալիկադնոս գետի մոտ, Ասորիքում, Օրոնտեսի գետաբերանի մոտ և Միգիայում (XIII, 4, 6), բայց սխալմամբ նրանց նույնացնում է արամեացիների հետ (XVI, 4, 27), ըստ երևույթին, այդ անվանումների համանշյունությունից ելնելով։ Սակայն աղբյուրներից հայտնի է, որ առաջին անգամ արամեացիները հիշատակվում են Հյուսիսային Միջագետքում, մոտավորապես 1130 թ. «ախլամու» անվան տակ, մինչդեռ հոմերոսյան արիմները հիշատակվում են Տրոյական պատերազմի ժամանակներում, որ ընկնում է մ. թ. ա. XIII դարի վերջին (В. Бэнэцяну, նշվ. աշխ., էջ 117)։

39 Ըստ Հեսիքիոսի Եփեսոսը հնում կոչվել է Ἀρμένη։

Զևսին փոխարինող Արամը, ըստ Մարկվարտի, անձնավորում է արիմներին՝ հայերի նախնիներին[40]։ Հ. Մանանդյանը ևս նկատում է, որ Խորենացուց բաղված այս հատվածում «կարող են, իրոպես... պահպանված լինել հայ ժողովրդի աղոտ հիշողություններն իր ամենահին անցյալի մասին»[41]։

Մովսես Խորենացու շարադրանքի համաձայն, Արսամը թշնամու փախուստից հետո այդ վայրի («ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա») կառավարիչ է նշանակում իր ազգականներից մեկին, Մշակ անունով[42]։ Այս Մշակ անվան մեջ էլ պահպանվել է փոյուգ-միսիացիների մուշկ էթնոնիմը՝ հին հայկական Մուշակ ձևով և համահնչուն է մ. թ. ա. XII—IX դդ. հիերոգլիֆիկ-խեթական արձանագրություններում պատահող Musaka ցեղանվան։ Ըստ այսմ պատահական չպետք է համարել, որ այս տերիտորիան համապատասխանում է անտիկ ժամանակաշրջանի Կապադովկիայի վարչական միավորներից մեկին՝ ստրատեգիա Կիլիկիային իր Մաժակ մայրաքաղաքով։ Կարևոր է նշել, որ հայերի ծագման մասին հին պատմական զրույցները, որ հավաքել է Մովսես Խորենացին V դարում, այս երկրամասը կոչում են «Պռոտին Արմենիա» (Πρωτην Αρμενιαν)[43]։ Թեև Խորենացին ստուգաբանում է այն իբրև «Առաջին Հայք», սակայն իրականում այս անունը ոչ մի առնչություն չունի մ. թ. IV դարից հայտնի «Առաջին Հայք» (Armenia Prima) հռոմեական պրովինցիայի հետ, չնայած որ հարևան էր նրան, այլ նշանակում է «նախնական Հայաստան»։ Խորենացու սխալը կրկնել է և VII դարի մեր «Աշխարհացույցի» հեղինակը։

Խոսելով առասպելական Արամի այդ երկրում կատարած սխրագործությունների մասին, Մովսես Խորենացին եզրափակում է. «Վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկզիմայն զայն Պռոտին Արմենիան, որ Բարգմանի Առաջին Հայք։ Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա»։ Այնուհետև պատմիչը գրում է. «Արդ սա այսպէս հզօր և անուանի եղեալ՝ յանուն սորա մինչև ցայսօր, որպէս ամենեցուն յայտնի է, որ շուրջ զմեօք ազգք զաշխարհս մեր անուանեն»[44]։ Այսինքն՝ այս Արամի անունով անվանում էին՝ «ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք» (Մովս. Խոր., Ա, ԺԲ)։

Մովսես Խորենացու մոտ պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ նրա ժամանակ (մ. թ. V դար) ժողովուրդը հիշողություններ էր պահպանել Փոքր Ասիայում հայերի սկզբնական հայրենիքի մասին, և նրան հայտնի էին այնպիսի ավանդություններ, ըստ որոնց հայերի նախահայրը ոչ թե Հայկն էր, այլ Արամը, որի անունով էլ հարևան ժողովուրդները հայերին կոչում էին արմեններ։

---

[40] J. Markwart, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation. Berlin, 1919, էջ 67։ Նույնի՝ Le berçaeu armeniennes, „Revue des etudes arméniennes", 1928, VIII, vol. 2, էջ 221—223։

[41] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, էջ 23։

[42] Մ. Խորենացի, Ա, ԺԴ, էջ 45—48։

[43] Հայցական հոլով. ուղղականով՝ Πρωτη Αρμενια։

[44] Մովսես Խորենացի, Ա, ԺԴ, էջ 46—47։

Վերջերս ուշադրություն է դարձվել նաև այն փաստի վրա, որ դաղափարագիր խեթերեն արձանագրությունների տարածման շրջանը «բավական ճշգրիտ համընկնում է Փոքր Հայքի սահմանների հետ, միայն հարավում և հարավ-արևմուտքում անցնելով փոյուգական Տիանիտիսի, Կիլիկիայի և Ասորիքի տերիտորիան»[45]։ Այդ արձանագրությունները պատկանում են մ. թ. ա. I հազարամյակի սկզբին՝ մինչև VIII դարի վերջը կամ նույնիսկ VII դարի սկիզբը։

Այս տերիտորիայում հայալեզու բնակչությունը հաստատվել էր նրանց մասին անտիկ հեղինակների տված առաջին տեղեկություններից (մ. թ. ա. VI դար) շատ ավելի վաղ։ «Սեփական գրավոր և գրական տրադիցիա չունենալով, նրանք օգտվում էին այն բնակչության լեզվով ու գրով, որը նրանք գտել էին այստեղ դեռ XII դարում մ. թ. ա., այն է՝ «հիերոգլիֆիկ խեթերի»։ Սրանով էլ հենց պետք է բացատրել «հիերոգլիֆիկ խեթերեն» արձանագրությունների տարածման տերիտորիայի մոտավոր համընկնումը հայերի տարածման ենթադրական հնագույն տերիտորիայի հետ[46]։ Սրանով է բացատրվում նաև զգալի խեթական լեզվական շերտի առկայությունը հայերենում»[47]։ Այս դրույթի հիման վրա Ի. Մ. Դյակոնովը հանգում է այն եզրակացության, որ «I հազարամյակի սկզբի հայերը հանդիսանում էին տեղական խեթական (գերազանցապես «հիերոգլիֆիկ խեթական») բնակչության և թրակա-փոյուգական «մուշկերի» (բառիս այն առումով, որը հատուկ էր II հազարամյակին մ. թ. ա.) ցեղերի խառնուրդ»[48]։ Բնորոշ է, որ XII—IX դդ. մ. թ. ա. հիերոգլիֆիկ-խեթական բնագրերում հիշատակվում է Musaka երկիրը, որը համապատասխանում է հայկական պատմական ավանդության «Մշակ\\Մուշակ»-ին, որ պերսոնիֆիկացված ցեղանուն է։

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ հնդեվրոպական այն ցեղերին, որոնք տարբեր ժամանակներում գաղթել են Փոքր Ասիա և բնակություն հաստատել նախահայկական ցեղերի բնակեցրած տերիտորիայում։ Հին հունական հեղինակների մոտ պահպանված այդ ցեղանունների, տեղանունների և անձնանունների կցկտուր տվյալները մի ինչ-որ չափով լրացնում են մեր ունեցած տեղեկությունները հայ ժողովրդի ծագման մասին։

Դրանցից մեկն է հալիզոնների թրակական ցեղը, որը նախահայերի և խալյուբների հարևանն է եղել Փոքր Հայքում։

Հալիզոնների գաղթը հավանաբար տեղի է ունեցել արիներից հետո, բայց քանի որ Հոմերոսի «Իլիականում» (II, 857) նրանք հիշատակվում են որպես տրոյացիների դաշնակիցներ, ապա կարող ենք Փոքր Ասիայում նրանց երևալու ժամանակը ևս համարել մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսը։ Ըստ երևույթին Փոքր Ասիա գաղթել է հալիզոնների մի մասը միայն, իսկ նրանց հիմնական զանգվածը, դեռևս Հերոդոտի օրոք, շարունակել է ապրել իր վաղեմի տերիտորիայում։ Հալիզոններն ապրում էին ներկայիս Ուկրաինայի տափաստաններում, միլետյան Օլվիա գաղութից հյուսիս, հելլենա-սկյութներից այն կողմ, Բորիսթենն (Դնեպր), Թիրաս (Դնեստր) և Հիպանիս (Բուգ) գետերի միջև։

---

45 Ի. Մ. Դյակոնով, Խեթերը, փոյուգացիները և հայերը, էջ 73։

46 Այս տերիտորիան համապատասխանում է Թեգարամմա, Թոգարմա կամ «Տուն Թորգոմայ» երկրին։

47 Ի. Մ. Դյակոնով, Խեթերը, փոյուգացիները և հայերը, էջ 75։

48 Նույն տեղում, էջ 70։

Դեռևս նախահոմերոսյան շրջանում հալիզոնները շարժվում են դեպի հարավ և մուտք գործում Փոքր Ասիա՝ Բյութանիայի տերիտորիան և նրանից արևելք։ Ավելի ուշ նրանց մնացորդները հանդիպում են Մակեդոնիայում (Պալլենան Քաղկիդիկեում), Փոքր Փռյուգիայում (Տրոյական պետության նախկին տերիտորիան), Կիզիկ քաղաքի մոտերքում (Strabo, XII, 3, 20) և այլուր։ Բայց գաղթածների հիմնական մասը ապրում էր խալյուբների և նախահայերի կողքին Պոնտական և Հայկական լեռներում (Ἀρμένιον ὄρος—ըստ Հեկատայոս Միլետացու), Հալիս գետի ակունքների շրջանում, որն այդպես է կոչվում իրենց անունով։ Սրանք բոլորը ժամանակի ընթացքում ձուլվում են հայերի մեջ։

Հալիզոնների առնչությամբ հետաքրքիր է Հոմերոսի «Իլիականի» այն տեղեկությունը, որ նրանք եղել են տրոյացիների դաշնակիցները և ռազմական օգնություն են ցույց տվել նրանց։ Այս տեղեկությունները պատմական հիմք են տալիս Մովսես Խորենացու (Ա, Լ) մոտ պահպանված այն ավանդության, ըստ որի հայերի նահապետ Զարմայրը իր զորքով գնում է Պրիամոսին օգնության և զոհվում Տրոյայի պաշարման ժամանակ։ Համաձայն այդ ավանդության, Զարմայրը տրոյացիներին օգնության է ուղարկվել Ասորեստանի թագավոր Տեվտամի կողմից։ Այս վկայությունը հիշեցնում է հունական այն վերսիան, որի համաձայն տրոյացիների դաշնակիցներից մեկն էր Մեմնոնը, Շոշի հիմնադիր Տյուփոնի որդին։ Այս Մեմնոնին Պրիամոսին օգնության էր ուղարկել Տեվտամը, որին անորոշ ձևով անվանում են Ասորեստանի կամ Ասիայի թագավոր։ Տեվտամ անունը ծագում է Տիգդամիս կամ Լիգդամիս հայտնի անունից։ Ուշագրավ է, որ Պրիամոսի դաշնակից պելասգյան առաջնորդները նրան օգնության էին եկել տրոյական Լարիսայից և Տևտամի թոռներն էին[49]։ Այլ զրույցներից մեզ հայտնի է, որ Թեսսալական Լարիսայում երբեմն տիրել է պելասգյան մի թագավոր Տևտամիդաս (Teutamidas) կամ Տևտամիս (Teutamis) անունով[50]։ Թեսսալական Լարիսան ներդաշնակ է Փոքր Հայքի Լարիսայի հետ, որը գտնվում էր Հալիսի հովտին հարևան Մելաս գետի ակունքների շրջանում, ասել է՝ հրեշ Տյուփոնի առասպելի հետ կապված վայրերից ոչ հեռու։ Այստեղ, մոտերքում էր ապրում հալիզոնների ցեղը, ուստի հարց է ծագում՝ արդյոք Զարմայր անունը ուշ շրջանի իմաստավորում չէ՞ («զարմ»+«այր») առաջ եկած Արմայր ձևից, որ տառացիորեն պետք է նշանակի «արիմ այր»։ «Այր» վերջավորությամբ հայերենը պահպանել է «Արամայր» (Արմավիրի հնագույն անունը)[51], «Իշայր» (Մոկաց աշխարհի գավառներից մեկը), իսկ ուրարտական և ասսուրա-բաբելական արձանագրություններում պահպանվել է Վանա լճից հյուսիս և արևելք գտնվող երկրի անունը՝ Armarili, Armariali, Aramali ձևով։

Այսպիսով, Զարմայրի մասին զրույցը իրական դեպքերի ուշ շրջանի մի աղոտ վերհուշ է՝ արտացոլված Մովսես Խորենացու հաղորդած հայ պատմական ավանդության մեջ։

---

[49] Дж. Томсон, Исследования по истории древнегреческого общества. Доисторический Эгейский мир, М., 1958, էջ 259։

[50] Նույն տեղում։

[51] Այս անվան մի այլ տարբերակն է «Արամայոս» անունը։ Արամայոսը, ըստ ավանդության, հիմնադիրն է «Արամայր» կամ «Արմաւիր» քաղաքի։

Հայկական տեղանունների տվյալներից ելնելով, հավանական է odomantes թրակական ցեղի գոյությունը Հայաստանում։ Ծոփքի մոտ odomantis անունն է կրել մի ամբողջ շրջան (Ստրաբոն, XI, 14, 5)։ Օդոմանտները, ըստ Հերոդոտի (V, 16, VII, 112), ապրում էին Մակեդոնիայում, պեոնների կողքին, Օրբելոս լեռան ստորոտի մոտ, Ստրիմոնի գետաբերանի շրջանում։ Օդոմանտների մյուս մասն ապրում էր Փոքր Ասիայում, Սինոպի մոտ (Thucidides, 101)։

Հայաստանում օդոմանտների բնակության վայրի տեղորոշման համար ուղեցույց կարող են լինել նաև Փոքր Հայքի երկու գավառների անունները՝ Օրբիսենե և Օրբալիսենե, որ հիշատակում է Պտղոմեոսը (V, 6)։ Այս շրջանները տեղադրվում են, ամենայն հավանականությամբ, ներկայիս Դիվրիգի և Արաբկիր բնակավայրերի միջև։

Կարելի է մատնանշել նաև մի շարք նման աշխարհագրական անուններ Փոքր Ասիայում և Հայաստանում (օրինակ՝ Caballa Լյուդիայում, Կիլիկիայում և Հայաստանում, Harpasos գետ Կարիայում և Հայաստանում և այլն)։ Համենայն դեպս տեղանունների և անձնանունների այս զուգորդությունները վկայում են, որ հայերի հնդեվրոպական նախնիները իրոք շարժվել են արևմուտքից արևելք, Փոքր Ասիայի հարավ-արևմտյան կողմից սկսած[52]։

Հայկական լեռնաշխարհում հալիզոնները, օդոմանտները և մյուս ցեղերը ժամանակի ընթացքում ձուլվել են հայերին։

Խեթական թագավորության կործանումից հետո (մ. թ. ա. 1200—1118) թրակա-փռյուգական ցեղերը, որոնց թվում ասսուրա-բաբելական աղբյուրները հիշատակում են փռյուգացի-միսիացիներին՝ մուշկեր անվան տակ և արիմուրումեացիներին, շարժվում են արևելք, դեպի Եփրատ և այնտեղից էլ՝ Հայկական լեռնաշխարհ։ Այդ շարժման մեջ ներգրավված էին նաև նախախեթական ափխազա-ադըղեական ցեղերը, որոնք թափանցելով Հայասա-Ազզիի ցեղերի միությունը, անցնում են այդ երկիրը, մասամբ տեղահանում են բնիկներին ու սրանց հետ միանում մուշկերին և ուրումեացիներին։ Ս. թ. ա. XII դարի ասորեստանյան արձանագրությունները մեծ տագնապով են խոսում մուշկերի ներխուժման մասին՝ ասորեստանյան տերության հյուսիս-արևմտյան շրջանները (մ. թ. ա. շուրջ 1165 թ.)։ Սրանք հենց այն մուշկերն էին, որոնք ներխուժեցին Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի սահմանները, դարձան նստակյաց հողագործներ և Ասորեստանի հարկատուներ։ Այստեղ ստեղծված թագավորությունը, որի կենտրոնը Խարբերդի դաշտում էր, ասորեստանցիները կոչում են «մուշկերի թագավորություն»[53]։

Հայկական լեռնաշխարհի սահմանները ներխուժած այդ ցեղերը զբաղեցրել էին Խարբերդի դաշտում և Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում (հին հայկական Անդեղ տուն գավառը) գտնվող Ալզիի և Պուրուլումզիի շրջանները։ Մուշկերն այստեղ ուրումեացիների և կասկեացի-աբեշլացիների հետ միասին կազմում են ցեղային միություն, որը գլխավորում էին հինգ առաջնորդ «թագավորներ»։ Իշուվա և Ալզի Պուրուլումզիի շրջաններում ստեղծված ցեղային այս միությունը՝ «մուշկերի թագավորությունը» բավական հզոր միավորում էր

52 Տե՛ս N. Adontz, նշվ. աշխ., էջ 320—327։

53 Մուշկերի այս թագավորությունը չպետք է շփոթել մ. թ. ա. VIII դ. հայտնի մուշկերի թագավորության հետ, որը փռյուգական պետություն էր։ Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 59—72։

և Ասորեստանի դեմ կարողանում էր հանել 20.000 զորք[54]։ Ասորեստանյան նվաճողների դեմ ընդհանուր պայքարում մուշկերի թագավորության հետ միավորվել էին նաև Արևմտյան Տիգրիսի ավազանի տեղական խուրրիական ցեղերը՝ Շուպրիա, Կադմուխի, Բաբխի, Խաբխի և այլ երկրները։

Այսպիսով, Ասորեստանյան պետության «բարբարոսական ծայրամասում» կազմավորվում է մի բավական ուժեղ ցեղային միություն, որի հետ ասորեստանյան նվաճողները պետք է լուրջ հաշվի նստեին։ Նրանք հաճախակի արշավանքներ են ձեռնարկում հնազանդեցնելու ըմբոստ լեռնցիներին։

Երբ մ. թ. ա. IX դարից սկսած Ուրարտուն ընդարձակվելով հասավ նաև Շուպրիա երկրին, ապա այդ երկիրն արդեն այնքան էր յուրացվել նոր ցեղերի՝ ուրումեացիների կողմից, որ Շուպրիայի փոխարեն ուրարտական արձանագրություններում օգտագործվում են Ուրումե||Ուրմե կամ Արմե անունները։ Մարկվարտն[55] իրավացիորեն նկատել է, որ հենց այստեղ, Arme էթնոնիմից, խուրրի-ուրարտական -ini վերջավորության հավելումով, որը մեդական լեզվի ազդեցությամբ դարձել էր -ina, ձևավորվել է Armina անունը, որից և ծագում է հայերի՝ հին պարսկական արձանագրություններում և հին հունական գրականության մեջ ընդունված համապատասխան անունը։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ տեղական խուրրիական բնակչությանը արմենները ձուլել էին իրենց և ժամանակի ընթացքում տարածվել նրանց բնակեցրած ողջ տերիտորիայում, արևելյան կողմից ընդգրկելով Մշո դաշտը, որտեղով անցնում էր ուրարտական բնակչություն ունեցող տերիտորիայի սահմանը։

Ցեղային միությունը, որն սկզբում կոչվում էր Մուշկերի թագավորություն, իսկ հետագայում՝ Արմե կամ Շուպրիա, կայուն միություն դուրս եկավ, մի հանգամանք, որ պայմանավորված էր Ասորեստանի և Ուրարտուի ագրեսիայի դեմ պայքարի անհրաժեշտությամբ։ Անդրադառնալով իրոկեզների ամերիկյան ցեղին, որը նոր տերիտորիա էր գրավել և գտնվում էր համանման պայմաններում, Ֆ. Էնգելսը գրում է. «Քանի որ այդ մարզը նրանք նոր էին նվաճել, ուստի այդ ցեղերի՝ ըստ սովորության միմյանց հետ միացած լինելը նրանց կողմից դուրս քշված ցեղերի հանդեպ՝ միանգամայն բնական էր։ Այդ ցեղային դաշնակցությունը իր ձեռք բերած ուժի գիտակցության վրա հենված անմիջապես հարձակողական բնույթ ստացավ և... իրեն շրջապատող ահագին երկրամասեր նվաճեց, ըստ որում բնակիչներին մասամբ դուրս մղեց իրենց բնակավայրերից, մասամբ՝ իրեն հարկատու դարձրեց»[56]։ Ինչպես տեսնում ենք, Ֆ. Էնգելսը խոսում է Արմե-Շուպրիա ցեղային միության կազմավորման պայմաններին համանման մի դեպքի մասին։

Սակայն Արմե-Շուպրիա ցեղային միությունը կազմած ցեղերը մ. թ. ա. XII—XI դարերում իրենց զարգացման մակարդակով իրոկեզներից բարձր էին կանգնած։ Իրոկեզների միությունը արյունակից ցեղերի միություն էր և ուներ

---

54 Մուշկերի թագավորության կենտրոնը՝ Մուշկու երկիրը, որը հետագայում ուրարտացիների մոտ կոչվելու է Մուշանի, հայերը հավանորեն անվանում էին Մուշար (ներկ. Մուշար-գաղ լեռների շրջանը), նա ուներ համանուն Մաշքա (Պտղոմեոս, V, 12, 8) կենտրոնը։ Մուշար (թերևս՝ Մուշայր) հիշեցնում է Արամայր անվան ձևը։

55 J. Markwart, Die Entstehung..., էջ 67։

56 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1953, էջ 131, 192։

ընդհանուր լեզու[57], իսկ Արմե-Շուպրիա միության մեջ մտնում էին ծագումով տարասեռ ցեղեր։ Դրանք էին՝ մուշկերը, որոնց անվան տակ այդ շրջանում հասկացվում էին փռյուգական ցեղերը (միսիացիները և մեոնները) և ուրիշ ազգակից ու դաշնակից էթնիկական կազմավորումներ, ինչպիսիք էին ասորեստանյան այլ արձանագրություններում հիշատակվող ուրումեացիները, այսինքն հայերի հնդեվրոպական նախնիները՝ արիմները, ինչպես նաև կասկեացիները կամ աբեշլացիները, որոնք պատկանում էին նախախեթական ափիազա-ադրզեական ցեղերին։ Հիշատակված մուշկերը, ուրումեացիներն ու կասկեացիները հանդիպեցին զանազան խուրրիական ցեղերի, որոնք կամ նրանց դաշնակիցները դարձան ընդդեմ ընդհանուր թշնամու՝ Ասորեստանի, կամ էլ հպատակվեցին, դառնալով նրանց հարկատուները։ Այսպիսով, «Մուշկերի թագավորությունը» կամ Արմե-Շուպրիա ցեղային միությունը ոչ թե արյունակից, այլ ծագումով և լեզվով տարբեր ցեղերի միություն էր, դա տերիտորիալ միություն էր։

Եթե Հայասա-Ազզին ներկայացնում էր ծագումով և լեզվով իրար մոտ կանգնած մի խումբ ցեղերի կազմակերպություն, առաջացած մի շարք ցեղերի ինտեգրացիայի հողի վրա, ապա Արմե-Շուպրիա միությունը արդեն ցեղային միություն էր, առաջացած իբրև սինթեզ բազմազան էթնիկական տարրերի՝ ինչպես տեղական խուրրի-ուրարտական, այնպես էլ եկվոր մուշկերի-արիմների։

Պատմական զուգահեռները ցույց են տալիս, որ տերիտորիալ տեսակետից մոտ, բայց ծագումով և լեզվով տարբեր ցեղերի միության պայմաններում տարալեզվության նման արդելքը վերացնելու համար միության մեջ մտած ցեղերից մեկի լեզուն վերածվում է միջցեղային լեզվի[58]։ Մուշկերի ցեղային միության՝ «Մուշկերի թագավորության» մեջ միջցեղային հաղորդակցման այդպիսի միջոց է դառնում արիմներ-ուրումեացիների լեզուն, այսինքն՝ ապագա հայերենը։ Այդ երևում է թեկուզ հետևյալ փաստից։ Վերոհիշյալ ցեղերի նվաճած տերիտորիան վաղուց ի վեր ասորեստանցիներին հայտնի էր Շուպրիա կամ Շուբրիա անունով, բայց այնուհետև ասորեստանցիներն սկսում են այն կոչել նաև Ուրումու։ Հետագայում, մ. թ. ա. VIII դարից սկսած, երբ այդ տերիտորիան նվաճվում է և մտցվում Ուրարտու պետության կազմի մեջ, ուրարտական արձանագրություններում այն սկսում է կոչվել Արմե, Ուրմե կամ Ուրումե։ Այս փաստը, ըստ երևույթին, վկայում է, որ հիշատակված ցեղերի մեջ, վերջին հաշվով, գերիշխող դիրք էին գրավել արիմները կամ ուրումեացիները, որոնց անունով էլ ուրարտացիները, մասամբ նաև ասորեստանցիները, սկսում են կոչել Շուպրիան։ Այստեղ մուշկերը ձուլվում են իրենց ազգակից արիմներին[59]։ Մուշկերը ևս, ուրեմն, հիմնականում հայերի հնդեվրոպական նախնիներն էին։ Այս տեսանկյունով պատմականորեն հիմնավորվում է այն կարծիքը, թե հայերի «սոմեխի» վրացական անվան հիմքում ընկած է «մեսխ»||«մեխ» էթնիկական տերմինը, որը ասորեստանյան «մուշկի»

57 Նույն տեղում, էջ 131։

58 Նույն տեղում։

59 Մինչդեռ Հալիսի հովտում, որտեղ ապրում էր մուշկերի հիմնական մասը, նրանք պահպանել էին գերիշխող դիրքը. նրանց զբաղեցրած տերիտորիան՝ Փռյուգական թագավորությունը, ուրարտացիներն ու ասորեստանցիներն անվանում էին Մուշկու կամ Մուշկինի։

և հայկական «մշակ»||«մուշակ» անվանման քարթվելականացված ձևն է։ Այն իր հաստատումն է գտնում նաև բանասիրական առումով[60]։

Այսպիսով, արմենների լեզուն ժամանակի ընթացքում դառնում է ցեղային միության միակ լեզուն։ Մյուս, գերազանցապես խուրրիական, ցեղերի լեզուները աստիճանաբար վեր են ածվում հայոց լեզվի տերիտորիալ բարբառների, իսկ հայոց լեզուն, ավելի ու ավելի հարստանալով, տարածվում է Հայկական լեռնաշխարհի ներքին շրջաններում ապրող ցեղերի մեջ։ Ուրարտական պետության գոյացումից հետո այդ պրոցեսին մեծապես նպաստեց նվաճված երկրների բնակչության մասսայական վերաբնակեցումը պետության կենտրոնական շրջաններում, որ լայնորեն կիրառվում էր ուրարտացիների կողմից։

Արմե-Շուպրիայի գոյությունը և հզորացումը մեծ անհանգստություն էր պատճառում ժամանակի հզորագույն տերությանը՝ Ասորեստանին։ 1115 թ. Ասորեստանում գահ բարձրացած Թիգլաթպալասար Ա-ը պատերազմ է սկսում ընդդեմ Շուպրիայի, որը պոտենցիալ վտանգ էր ներկայացնում Ասորեստանի «բարբարոսական ծայրամասից» ոչ հեռու գտնվող կենսական կենտրոնների համար։

* * *

Մ. թ. ա. XII դարում հայկական ցեղերը գերիշխող են դառնում Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասում և սկսվում է տեղաբնիկ խուրրի-ուրարտական և եկվոր հնդեվրոպական ցեղերի միաձուլումը։ Այս ժամանակաշրջանում դեռևս «մուշկական»—արմենական և հայական ցեղերի միջև եղած տարբերությունը չէր վերացել, սակայն հետագա պատմական զարգացման ընթացքը տանում էր դեպի նրանց վերջնական միաձուլումը՝ իբրև մեկ ամբողջական ժողովուրդ։

Այդպիսով, մեզ հասած կցկտուր տեղեկությունները ցույց են տալիս, որ Փոքր Ասիայից մուշկերի (փռյուգացիների) և ուրումեացիների (արմենների) ներխուժումից հետո (մ. թ. ա. 1165 թ.) Ասորեստանի պետության մեջ մտնող Շուպրիա կամ Արմե երկրում ստեղծվեց հայերի և նրանց ազգակից ցեղերի միությունը, որը հայտնի էր իբրև «Մուշկերի թագավորություն»։ Ինչպես Ասորեստանի տիրապետության ժամանակաշրջանում, այնպես էլ Ուրարտական պետության ժամանակաշրջանում, Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան մասերում տիրապետող էթնիկական տարրը արմենական ցեղերն էին[61]։ Սրանց անունով էլ Մշո դաշտը (հին հայկական Տարոնը)

---

60 Առաջին անգամ այս կարծիքն առաջ քաշեց և հիմնավորեց Ն. Յա. Մառը (Н. Я. Марр, История термина „абхаз", Сборник статей Н. Я. Марра, „О языке и истории абхазов", М.—Л., 1938, էջ 51։ Գ. Խալաթյանցի այն պնդումը, թե someḫi տերմինը ծագում է zuhma (նեսիտ-խեթերեն), suḫma կամ suḫmu (ակկադերեն) երկրի անունից, որը պաշտպանեցին Բ. Բ. Պիոտրովսկին և Դ. Ա. Մելիքիշվիլին (Г. Халатьянц, О некоторых географических названиях древней Армении в связи с данными Ванских надписей, „Древности Восточные", Труды Восточной Комиссии Имп. Археол. Об-ства, т II, вып. II, էջ 126), առկա փաստերով չի հաստատվում։ Ասորեստանյան արձանագրությունների Սուխմե երկիրը տեղորոշվում է Արածանիի հովտում, Բալու քաղաքի շրջանում, որտեղ գտնվում էր Ասորեստանյան տերության սահմանները ներխուժած մուշկերի, այսինքն՝ հայկական ցեղերի թագավորությունը։

61 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1958, № 3, էջ 59—72։

ii Արևմտյան Տիգրիսի ու Եփրատ-Արածանի գետի ներքին հոսանքի հովիտները (հին հայկական Աղձնիքը) ուրարտական արձանագրություններում կոչվում են Արմե կամ Ուրմե-Ուրումե։ Հենց այստեղ՝ Ուրարտուի և Ասորեստանի «բարբարոս ծայրամասերի» ամենաթույլ օղակներում կազմավորվեցին հայկական ցեղային միությունները։ Սկզբնական շրջանում «Մուշկերի թագավորություն» անվամբ ցեղային միությունը կազմող ցեղերը Ասորեստանի հարկատուներն էին, սակայն հետագայում նրանք անջատվում են և իրենց ինքնուրույնության համար պայքար մղում ոչ միայն Ասորեստանի, այլև Ուրարտուի դեմ։ Իր հզորության շրջանում Ուրարտական պետությունը, սկսած Մենուայի (810—786) ժամանակներից, արշավանքներ է կատարում Ուրմե (նույն Արմե-Շուպրիա) երկրի դեմ, բայց այն հաջողվում է նվաճել միայն Արգիշտի Ա-ի օրոք (786—764)։ Արմե-Շուպրիան, սակայն, Ուրարտուին ենթարկվում է ընդամենը 60 տարի (773—714 թթ.)։ Այս ասելով, մենք նկատի ունենք Հայկական Տավրոսից հարավ գտնվող երկրամասերը, որտեղ գերիշխող էթնիկական տարրն էին հանդիսանում հայկական ցեղերը և նրանց անունով ասորեստանյան Շուպրիան սկսեց կոչվել Արմե։ Հայկական Տավրոսից հյուսիս՝ Արածանիի հովտում, նույնպես գերիշխող էին հայկական ցեղերը, որոնք տակավին մնում էին Ուրարտուի թագավորության գերիշխանության ներքո։ Ասորեստանյան թագավոր Սարգոն Բ-ի (722—705) 714 թ. ռազմարշավի ժամանակ Հայկական Տավրոսից հարավ ընկած երկրամասերը ընդմիշտ անջատվում են Ուրարտուից, և այդտեղ ապրող հայկական ցեղերը, աղատագրվելով, դառնում են Մերձավոր Արևելքում բորբոքված բուռն իրադարձությունների մասնակից։ Նույնիսկ Ռուսա Բ-ի թագավորության շրջանում (685—645), երբ Ուրարտուն միաժամանակ հզորացավ, նրան չի հաջողվում վերամիավորել 714 թ. անջատված հարավային ծայրամասային երկրները՝ Արմե-Շուպրիան, Նաիրի-Խուբուշկիան և Արդինի-Մուսասիրը։ Ասորեստանը ևս չի կարողանում ամրապնդվել Արմե-Շուպրիայում և հարևան երկրներում։ Նրա գերիշխանությունը այնտեղ տևեց ընդամենը քսան տարի (մ. թ. ա. 673—653 թթ.)։ Ամենայն հավանականությամբ, դրանք Ասորեստանից անջատվել էին 653 թ., երբ ապստամբել էր Բաբելոնը, և նրան էր միացել Մեդիան (Մարաստանը)։ VII դարի վերջին Արմե-Շուպրիան, Նաիրի-Խուբուշկիան և Արդինի-Մուսասիրը միավորվում են մեդացիների հետ և համատեղ հարվածներով կործանում նաև Ասորեստանը, ապա Ուրարտուն։

Ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը հիմնականում տեղի է ունեցել Ուրարտուից դուրս և նրանից անկախ, չնայած նրան, որ հայկական էթնոսի առաջացման գործում մեծ դեր է խաղացել ուրարտացիներին մոտ գտնվող խուրրիական սուբստրատը։ Սակայն անխուսափելի էր հայկական ցեղերի շփումը Ուրարտուի հետ։ Վանի թագավորության էքսպանսիան դեպի արևմուտք և հարավ-արևմուտք հանդիպեց ուժեղ դիմադրության այդ տեղերում բնակվող հայկական ցեղերի կողմից, սակայն ուրարտացիները ղենքի ուժով ենթարկում են նրանց իրենց գերիշխանությանը, որից հետո հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը ապրում է նոր փուլ՝ սկսում է լայն փոխազդեցությունների մի շրջան հայերի և ուրարտացիների միջև, որն ավարտվում է վերջիններիս միաձուլմամբ հայերի մեջ։ Հանգամանք, որի համար նպաստավոր պայմաններ էր ստեղծել Ուրարտուի թագավորության ներքին և արտաքին քաղաքականությունը։

Ուրարտուն մ. թ. ա. VIII դարի առաջին կեսին իր տիրապետությունը տարածեց ամբողջ Հայկական լեռնաշխարհի վրա, իր մեջ ընդգրկելով հայկական ցեղերի կողմից բնակեցված գրեթե բոլոր տերիտորիաները։ Ահա այս ժամանակաշրջանում հայկական ցեղերը կամավոր և բռնի միջոցներով հաստատվում են Ուրարտուի թագավորության կենտրոնական մասերում, այն է՝ Վանա լճի ավազանում, ապա Արարատյան դաշտավայրում։ Մեզ հասած ուրարտական արձանագրություններից տեղեկանում ենք, որ Արգիշտի Ա-ը (786—764) Ծուպանի (հայկական Սոփք) և Խաթե (Ծոփքին հարևան, թերևս նրանից հյուսիս ընկած նախկին Հայասան) երկրներից բերված և այժմյան Երևանի արվարձաններում բնակեցրած 6600 զինվորների միջոցով մ. թ. ա. 782 թ. հիմնում է Էրեբունի-Երևանը[62]։ Այս զինվորները, անշուշտ, հայկական ցեղերից էին, բռնի կերպով այստեղ բնակեցված։ Մի այլ ավելի ցայտուն փաստ վերաբերում է Ռուսա Բ-ի (685—645) ժամանակաշրջանին։ Վանա լճի հյուսիսային ափին գտնվող Արծկե (Ադիլջեվազ) գյուղում հայտնաբերված ուրարտական արձանագրություններից տեղեկանում ենք, որ Ռուսա Բ թագավորը մ. թ. ա. 676 թ. արշավանքների ժամանակ նվաճված Մուշկինի, Խաթե և Խայիտու երկրներից բռնի դաղթեցրել է տեղական ազգաբնակչությանը և բնակեցրել արձանագրության գտնվելու վայրում, որը կոչվել է Զիուկունի երկիր[63]։

Սակայն հայկական տարրի ներթափանցումը Ուրարտուի թագավորության կենտրոնական գավառները հիմնականում տեղի էր ունենում խաղաղ ճանապարհով։ Այդ ներթափանցումը Արմե-Շուպրիայից և հարևան երկրամասերից դեպի Վանա լճի ավազանը տեղի էր ունենում երկու հիմնական ուղղություններով՝ Վանա լճի հյուսիսային և հարավային եզերքներով։ Հյուսիսային եզերքով թափանցող հայկական ցեղերը թողնում են իրենց անունը, որը հիշատակվում է ասսուրա-բաբելական և ուրարտական արձանագրություններում՝ Aramali, Armarili, Armiraliu ձևերով, իբրև Ուրարտուի կենտրոնական երկրամասի անուններից մեկը և որը պահպանվել է հայ մատենագրության մեջ «Արամայր» ձևով։ Վերջինս, իբրև Արմավիր քաղաքի անվան այլ տարբերակ, պահպանվել է Անանունի մոտ[64]։ Ինչպես տեսնում ենք, տարբեր ձևերով ավանդված այս անվան հիմքում ընկած է «Արիմ-Արմեն» ցեղանունը և ենթադրել է, տալիս, որ Ուրարտուի պետության բուն երկիրը՝ Բիայնիլին համենայն դեպս VIII դարում կոչվել է նաև Արամալի||Արմարիլի կամ «Արամայրիլի», որ հավանաբար «Արմինա» կամ «Արմենիա» անվան տարբեր ձևը պիտի հանդիսանա։

Վանա լճի հարավային եզերքով թափանցող հայկական ցեղերը նույնպես թողել են իրենց հետքը սեղանունների մեջ։ Մ. թ. ա. 714 թ. ասորեստանյան թագավոր Սարդոն Բ-ի (722—705) դորքերը Ուրարտուի կենտրոնական մա-

---

[62] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, 127, II, 33, М., 1960, էջ 214, 216։

[63] Նույն տեղում, 278, էջ 341—342։ Տե՛ս նաև նույն հեղինակի Наири—Урарту, Тбилиси, 1954, էջ 315—316։

[64] «Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն», Երևան, 1939, գլ. Ա, էջ 5։ «Արամայր» անվան մեջ «այր» մասնիկը պիտի համապատասխան լինի վրացերեն ერი «էրի» բառին, որ նշանակում է «ժողովուրդ», «զորաբանակ»։ Այս վերջավորությունն ունեն Իշ-այր (պիտի նշանակի՝ իշուվացիներ) և Մուշար||*Մուշայր (պիտի նշանակի՝ մուշկեր-փռյուգացիներ), բառացի «արամ-ժողովուրդ», «իշուվա-ժողովուրդ», «մուշկ-ժողովուրդ»։

սերը կատարած արշավանքի ժամանակ անցել են մայրաքաղաք Տուշպա-Վանից դեպի արևելք և հարավ-արևելք գտնվող Այազու կամ Այդու երկրով։ Վերջինս տեղադրվում է Հայոց ձոր կամ Երվանդունիք գավառի տերիտորիայում, որի հետ են կապվում հայկական ավանդությունները հայ ժողովրդի առասպելական նախահայր Հայկ նահապետի և նրա տոհմի բնակության վայրի մասին։ Ինչպես նշում ենք մեր մի այլ հոդվածում, այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ մեզ հետաքրքրող անվան մեջ առաջին Aya մասնիկը կարող էր կարդացվել Haya, և Hayadu կարող է հոմանիշ լինել «Հայք» (որտեղից և «Հայոց ձոր») անվան[65]։ Հիշենք ավանդությունը, որը այդ տեղերումն է բնակեցնում հայ ժողովրդի առասպելական նախահայր Հայկ նահապետին։ Վերջինս ճակատամարտով տիրել է այդ տեղերին և «զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, ...այսորիկ աղագաւ,— շարունակում է զրույցը,— և զաւառն այժմ անուանի Հայոց ձոր... Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք»[66]։ Այս ավանդությունը հետաքրքիր է առաջին հերթին նրանով, որ հայ ժողովրդի երկրի «Հայք» անունը կապում է Ուրարտուի կենտրոնական գավառի հետ։ Այս ապացուցվում է գիտական տվյալներով. Ուրարտուի կենտրոնի ներգրավումով հայերի ձևավորման ընթացքի մեջ նշանավորվում է հայ ժողովրդի կազմավորման ավարտը։

Արմե-Շուպրիայի և հայկական ցեղերով բնակեցված այլ երկրամասերի տնտեսական և սոցիալական հետագա զարգացումը նախադրյալներ է ստեղծում դասակարգային հասարակարգին անցնելու, որով պիտի նշանավորվեր հայ ժողովրդի կազմավորման ավարտման ընթացքը։ Բնորոշ է, որ Արմե-Շուպրիան ներգրավվում է միջազգային ապրանքափոխանակության մեջ, մասնակցելով երկաթի տարանցիկ առևտրին։ Այս էր հիմնական պատճառը, որ Արմե-Շուպրիան հյուսիս-ասորիքյան ու արևելա-փոքրասիական քաղաքպետությունների հետ միասին վերածվում է կովախնձորի՝ Ասորեստանի և Ուրարտուի միջև։ Ինչպես առևտուրը, այնպես էլ արտաքին քաղաքական էքսպանսիան արագացնում են նստնադարյան-համայնական հարաբերությունների քայքայման և պետականության տարրերի սկզբնավորման ընթացքը՝ այստեղ ապրող հայկական ցեղերի միջավայրում։

Այս ժամանակաշրջանի Արմե-Շուպրիայում դեռևս զորեղ է տոհմային դեմոկրատիան։ Այստեղ ապաստան էին գտնում Ասորեստանից և Ուրարտուից դժգոհ բոլոր տարրերը և առաջին հերթին ստրուկներն ու շահագործվող ազատ համայնական-երկրագործները։ Այդ են վկայում մ. թ. ա. VII դարի ասորեստանյան արձանագրությունների տեղեկությունները Շուպրիայի մասին։ Մեզ հասել է ցայտուն օրինակ՝ կապված Ասորեստանի Սեննախերիբ (Սենեքերիմ՝ 705—681) թագավորի սպանության հետ մ. թ. ա. 681 թ.։ Բնորոշ է, որ թագավորին սպանող նրա որդիները՝ Ադրամելեքը և Սարասարը (Շարեցեր), պարտություն կրելով թագավոր դարձած Ասսարխադդոնից (680—669), փախչում են Շուպրիա։ Այս միջադեպը պահպանվել է հայկական ավանդություններում և Մովսես Խորենացու (Ա, ԻԳ) մոտ։ Վերջինս հաղորդում է, որ այն ժամանակ, երբ Ասորեստանում սպանվեց Սենեքերիմ թագավորը, հայերին

65 Ս. Տ. Երեմյան, Հայկական առաջին պետական կազմավորումները (VII—VI դդ. մ. թ. ա.), «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 110։

66 Մովսես Խորենացի, Ա, ԺԱ, էջ 37։

կառավարում էր Սկայորդին։ Պատմահայրը կոնկրետ նշում է, որ Սենեքերիմին սպանողները ապաստան են գտել «մեկ մոտ», այսինքն՝ Հայաստանում և նշում է, որ սպանողներից մեկին՝ Սանասարին, «մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի հարավ-արևմտյան կողմում։ Նրա սերունդն աճելով ու բազմանալով լցրեց Սիմ կոչվող լեռը»[67]։ Հայկական էպոսը նույնպես հաղորդում է այդ իրադարձության մասին և Սանասուն կամ Սասուն գավառի անվանումը կապում է Սանասարի անվան հետ, ընդ որում նրանից և Ադրամելեքից է սերում «Սասնա ծռեր» Մհերին ու Սասունցի Դավթին։

Արմե-Շուպրիայի կենտրոնական մասը հիրավի համընկնում էր Սասուն լեռնային բարձրագիր գավառի տերիտորիայի հետ[68]։ Ասսուրա-բաբելական արձանագրություններից մեկ հայտնի է, որ Արմե-Շուպրիայի ցեղապետը՝ «թագավորը», նստում էր Ուպումն (հետագայում՝ Ափում) ամրոցում, իսկ ըստ հայկական ավանդական տվյալների, Սկայորդին նստում էր Ուպումեից ոչ հեռու գտնվող (և թերևս մեր ժամանակներում Քաղքիկ կոչվող) գյուղի վայրում[69]։

Ստորև կանգ ենք առնելու 681 թ. դեպքերի արտացոլման վրա եբրայական ավանդություններում, որոնք տեղ են գտել Բիբլիայի-Աստվածաշնչի երկու գրքերում՝ «Գիրք Թագաւորութեանց Չորրորդ» (ԺԹ, 36—37)[70] և «Մարգարէութիւն Եսայի» (ԼԷ, 38)[71]։ Եբրայերեն բնագրում, հայրասպան Ադրամելեք և Սանասար որդիների փախուստի մասին խոսելիս այն երկիրը, որտեղ նրանք ապաստան գտան, երկու դեպքերում էլ կոչվում է Arārāt, որ նույն Urartu անվան եբրայական տառադարձությունն է[72]։ Աստվածաշնչի հունարեն «Եօթանասնից» (Septuaginta) թարգմանության մեջ առաջին դեպքում հիշատակվում է՝ εἰς γῆν Ἀραράθ, երկրորդում՝ εἰς Ἀρμενίαν, որին և հետևել է հայերեն թարգմանությունը, իսկ վրացերեն թարգմանությունը երկու դեպքում էլ ունի სომხითი[73]—სომხეთი[74] («Սոմխիթի»—«Սոմխեթի»), այսինքն՝

---

67 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, աշխարհաբար թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 110։

68 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 112։

69 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 98, ծան. 28։

70 «Եւ դարձաւ Սեննեքերիմ արքայ Ասորեստանեայց և բնակեաց ի Նինուէ։ Եւ եղև մինչդեռ երկիր պագանէր ի տան Նեսրաքայ աստուածոյ իւրում, Ադրամելէք և Սարասար որդիք նորա սպանին զնա սրով, և ինքեանք զերծան յերկիրն Արարատայ, եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա» (Դ. Մատ., ԺԹ, 37)։

71 «Եւ դարձաւ անդրէն դնաց Սեննեքերիմ արքայն Ասորեստանեայց, և բնակեաց ի Նինուէ։ Եւ մինչդեռ երկիր պագանէր ի տան իւրում Նասրաքայ կռոց իւրոց, Ադրամելէք և Սարասար որդիք նորա սպանին զնա սրով, և ինքեանք զնացին փոխստական ի Հայս. եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա» (Եսայի, Լէ, 38)։

72 Հին եբրայեցիների դրականության մեջ Ararat-ը փոխարինում է ասսուրա-բաբելական Urartu-ին, որը այդ ժամանակ (մ. թ. ա. VIII դարում) ընդգրկում էր գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը։

73 და იყო ოდეს თაყუანის ცემდა ტაძარსა შინა მესრაქას ღმერთსა მისსა, და ადრამელიქ და სარასარ, ძეთა მისთა მოკლეს იგი მახჳლითა, ხოლო თჳთ ივლტოდეს ჭუცყანასა შინა სომხითად, და მეფე იქმნა ასორდან ძე მისი მის წილ (მეფეთა წიგნი დ, ით. 37).

74 და თაყვანისცემასა შინა მისსა, შორის სახლსა, ასარეს ღუთისა მისისასა, ადრამელიქ და სარასარ ძეთა მისთა, დასცეს იგი მახჳლებითა, ხოლო იგინი განრომილ იქმნეს სომხეთად, და მეფე იქმნა ასორდან ძე მისი მის წილ (წინასწარმეტყველება ესაიასი, ლზ. 38).

«Հայք»—Հայաստան։ Հայ ժողովրդի ծագման հարցի տեսակետից հետաքրքիր է Հր. Աճառյանի կողմից արված դիտողությունը, որ «Ժանասար» || «Սարասար» (երբ. Šareşer || Sareşer, որից հունարեն՝ Σαρασαρ) անունը առընչություն պիտի ունենա Kizwatna երկրի Šunaššura թագավորի անվան հետ[75]։

Խոսելով Սկայորդու մասին, պիտի նշել, որ պատահական չէ, որ նույն Սովսեպ Խորենացու տեղեկության համաձայն, սրա որդին է Պարույրը («Պարույր որդի Սկայորդւոյ»), որ դարձավ «առաջին պսակաւոր Հայոց», այսինքն՝ առաջին թագավոր Հայոց։ Պարույրը կարող էր Հայաստանի թագավոր դառնալ միայն 612 թ. հետո, այսինքն՝ Նինվեի անկումից և Ասորեստանյան թագավորության ոչնչացումից հետո։ «Սկայորդի» անվան ստուգաբանությունը կապվում է սկյութների հետ, որ զարմանալի չէ, եթե նկատի ունենանք, որ VIII—VII դդ. ընթացքում սովորական էին Հյուսիսային Կովկասից կիմերական, ապա սկյութական ցեղերի ներխուժումները, որոնցից շատերը հաստատվում են Հայկական լեռնաշխարհում և Փոքր Ասիայում[76]։ Հերոդոտը նույնիսկ նշում է սկյութների 28-ամյա տիրապետության մասին Մեդիայում և հարևան երկրներում (մ. թ. ա. 652—624 թթ.)[77]։ Սկայորդու որդի Պարույրը հանդես է գալիս իբրև Ուրարտուի հետ կապված իրադարձությունների ակտիվ մասնակիցը, սկյութների և մեդացիների դաշնակիցը[78]։

Հյուսիսային քոչվորների՝ կիմերների և սկյութների արշավանքները նախադրյալներ ստեղծեցին հին արևելյան բռնապետությունների՝ Ասորեստանի և Ուրարտուի անկման համար և նրանց ենթակա ժողովուրդներին հնարավորություն տվեցին թոթափելու ասորեստանյան և ուրարտական լուծը։ Պատմության թատերաբեմ են իջնում նոր պետություններ՝ Մեդիան, Հայկական թագավորությունը, ապա Աքեմենյան Իրանի պետությունը։

Մեզ հասած տեղեկությունները հնարավորություն են տալիս խոսելու հայկական երկու թագավորությունների մասին՝ Արմե-Շուպրիան (Եփրատ-Արածանիի ներքին հոսանքի շրջանում և Արևմտյան Տիգրիսի հովտում), որտեղ հանդես է գալիս Սկայորդու դինաստիան, և Ուրարտուի կորիզը հանդիսացող Բիայնան, որտեղ, Ուրարտուի թագավորության փլատակների վրա, մ. թ. ա. VII դ. վերջում—VI դ. շեմքին ասպարեզ է գալիս Երվանդունի դինաստիան։ Սրանով հիմնականում ավարտվում է հայ ժողովրդի կազմավորման երկարատև ընթացքը։ Այնուհետև հայկական էթնոսը ծավալվում է Արարատյան դաշտավայրում և նրանից արևելք և հյուսիս-արևելք գտնվող երկրամասերում։ Ուրարտացիները ձուլվում են հայերի մեջ։ Ուրարտական դինաստիայի անկումից հետո դադարում են խոսել ուրարտական արձանագրությունները։ Ուրարտուի փոխարեն մենք տեսնում ենք «Արմինա» կամ «Արմենիա» երկիրը, որը երբեմն հիշատակվում է Ուրարտուի անունով՝ «Ուրաշտու» կամ «Արարատ» (Երեմիայի մարգարեության մեջ մ. թ. ա. 593)։ Եթե այդ ժամանակ գոյություն ունենար հայալեզու աղբյուր, անշուշտ, մենք կունենա-

---

75 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1942, էջ 390։

76 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1968, № 2 (41), էջ 89—115։

77 Տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 288—289։

78 Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 21։

յինք հայ-արմենների երկրի տեղական անունը՝ «Հայք», որը, ցավոք սրտի, ավանդված է միայն հայ գրերի գոյության սկզբնական ժամանակաշրջանից (մ. թ. ա. V դարից)։ Այնուամենայնիվ մենք ուղղակի ցույցմունքներ ունենք, որ Ուրարտուի թագավորության անկումից հետո հապիվ էր անցել 90 կամ 70 տարի՝[79], երբ հանդիպում ենք գրավոր աղբյուրների հնագույն տեղեկության։ 520 թ. Բեհիսթունի արձանագրության մեջ արդեն հիշատակվում է «Արմինա» երկիրը, իսկ նույն այդ ժամանակները առաջին անգամ նշվում է «Արմենիա» երկիրը Հեկատայոս Միլետացու (շուրջ 546—480 թթ.) կողմից կազմած Օյկումենեի (այն ժամանակ հայտնի աշխարհի) քարտեզի վրա։ Հեկատայոս Միլետացուց հետո հանդես եկող պատմահայր Հերոդոտը (շուրջ 490—424 թթ.) արդեն հանգամանորեն է խոսում Արմենիայի մասին։ Համարյա վերջինիս կըրտսեր ժամանակակիցն է Քսենոփոնը (շուրջ (430—355 թթ), որը մանրամասն տեղեկություններ է տալիս արմենների-հայերի կենցաղի և ընդարձակ երկիր Արմենիայի մասին։ Ուրարտուի անկումից մինչև «Արմինա» երկրի առաջին հիշատակությունը այնքան կարճ ժամանակամիջոց է մի ամբողջ ժողովրդի կազմավորման պատմության տեսակետից, որ դժվար է կարծել, թե «արմեն» ցեղանունը կամ «Արմինա» երկրանունը առաջ է գալիս Ուրարտուի անկումից հետո, այն է 610—590 թթ. միջև (մ. թ. ա.)։ Պարզ է, որ Բեհիսթունի արձանագրությունից շատ ավելի վաղ շրջաններում այդ անունը գոյություն է ունեցել, բայց հին-արևելյան գրավոր աղբյուրներում, ինչպիսին են ակկադերենը կամ եբրայերենը, շարունակում են այդ երկիրը և նրա ժողովուրդը կոչել նախկին անուններով՝ «Ուրաշտու» կամ «Արարատ»։

Ինչպես տեսնում ենք, ուրարտացիները մասնակցում են հայ ժողովրդի կազմավորման պրոցեսին, երբ այն հասնում էր իր ավարտին, և Վանի թագավորության կենտրոնական մասի աղգաբնակչությունը՝ ուրարտացիները ձուլվում են հայերի մեջ իբրև նրա հիմնական բաղադրատարրերից մեկը։

Այնուհետև տեղի է ունենում հայերին շրջապատող ցեղերի միաձուլման ընթացքը։ Արտաքուստ միաձուլման այդ պրոցեսը արտահայտվում էր նրանով, որ էթնոնիմները-ցեղանունները ժամանակի ընթացքում դառնում էին տոպոնիմներ-տեղանուններ՝ երկրանուններ, գավառներ։ Օրինակ, որոշ ժամանակից սկսած «Մոկք», «Անձեւացիք» և բազմաթիվ նման անուններ դադարում են ցեղանուն լինելուց, նրանք դառնում են տեղանուններ, պահպանելով իրենց նախկին ձևը։

Բուն Ուրարտուում, այն է՝ Վանա լճի ավազանում, ուրարտացիները դադարել էին գոյություն ունենալուց, ձուլվելով օրըստօրե ուժեղացող հայերի մեջ և Աքեմենյան Իրանի աշխարհակալության տիրապետության ժամանակաշրջանում նրանց մնացորդները Ἀλαροδιοι անունով հիշատակվում են Հերոդոտի կողմից (III, 94), սակայն ժամանակի ընթացքում նրանք ևս հայացան, թողնելով իրենց անունը «Այրարատ» անվան մեջ։ Հետաքրքիր է այդ տեսակետից «Խաղտիք» անունը։ Այս մեգրելա-ճանական ցեղը շարժվում է Կուր գետի վերին հոսանքի երկրամասերից և տարածվում մինչև Վերին Եփրատի վերին հոսանքը և այնտեղից մինչև Սև ծովի ափերը։ Այդ տեղի է ունեցել մոտավորապես X—IX դդ. մ. թ. ա.[80]։

---

79 Ուրարտուի պետության անկումը տեղի է ունեցել մ. թ. ա. 610—590 թթ. միջև։

80 Տե՛ս И. М. Дьяконов, Предыстория армян, էջ 119—122։

Հին հույներին նրանք հայտնի էին «խալիբ» կամ «խալդայ» անուններով։ Սակայն հույներից առաջ սրանց դիտեին ուրարտացիները, որոնք այս ցեղային միությունը կոչում են «խալիտու»[81]։ Քսենոփոնը հաղորդում է արմենների և խալդայների ընդհարումների մասին ամառային արոտավայրերի համար[82]։ Հելլենիստական ժամանակաշրջանում խալիբներով բնակեցված տերիտորիաները գրեթե ամբողջապես մտնում էին Փոքր Հայքի թագավորության կազմի մեջ։ Առաջինը Արտաշես Ա-ն (189—161) էր, որ խալիբներից և նրանց ցեղակից մոսինոյկներից խլեց Կարին և Դերջան գավառները և միացրեց Մեծ Հայքի թագավորությանը[83]։ Այս ցեղերը այնուհետև հայանում են[84] և Պլինիոսը (23—79) գիտի միայն արմենոխալիբների ցեղը (NH, VI, 29), որը ապրում էր Պոնտական լեռների հարավային փեշերին, Ճորոխ գետի վերին հոսանքի շրջանում։ Առաջին հայ մատենագիրները (V դար) «Խաղտիք» անվան տակ արդեն հասկանում են Սև ծովի ափին այժմյան Տրապիզոնի և Բաթումի միջև գտնվող երկրամասը։ «Աշխարհացույցը» այս երկրամասում դիտե «Ճանիւս որ են Խաղտիք» ցեղը[85] և իրավացիորեն նշվում է, որ «Խաղտիքը» հայկական անունն է քարթվելական «ճան» ցեղի[86]։ Միջին դարերում Վերին Եփրատի հովտում խալդայների-խալիբների մասին հիշատակը մնացել էր միայն տեղանունների մեջ, ինչպիսին էր Խաղտոյ-առիճը (այժմ՝ Գաղտառիճ գյուղը)։ Նույն հայացման պրոցեսի մասին են վկայում Կուր գետի միջին հոսանքի գավառների անունները։ Այս տեղերում երբեմն գոյություն ուներ Աշգուզ անունով հայտնի սկյութական ցեղային միությունը, որոնցից հայտնի է շակասակ ցեղը, իսկ նրանց հարևան էին ուտիացիները (ὀυτιοι, Strabo, XI, 7, 1)։ Սրանք հայանում են և իրենց հետքը թողնում են Շակաշեն (Sakasene) և Ուտիք (Otene) երկրանունների մեջ։ Շակաշենը Ստրաբոնը (XI, 8, 4) համարում է Մեծ Հայքի լավագույն երկրներից մեկը, ինչպես և Ուտիքը, որը դառնում է Մեծ Հայքի անքակտելի մասը՝ Հայաստանի ամենաբերրի երկրամասերից մեկը։ Այս կողմերը ապրող զանազան աղվանական և կովկասյան լեզուներով խոսող այլ ցեղերը արդեն հելլենիստական ժամանակաշրջանում ձուլվում են հայերի մեջ և, այդպիսով, ժամանակի ընթացքում Մեծ Հայքի պետության քաղաքական սահմանները համընկնում են հայ ժողովրդի տարածման էթնիկական սահմանների հետ։ Համահարթման այս պրոցեսը այնքան էր խորացել, որ Ստրաբոնի ժամանակ (63 թ. մ. թ. ա.—21 թ. մ. թ.) արդեն, ինչպես ինքը հաղորդում է, Մեծ Հայքի աղգաբնակչությունը միալեզու (ὁμογλωττους) էր դարձել (Strabo, XI, 14, 5)։ Այս փաստը պետք է մեկնաբանել այն իմաստով, որ Մեծ Հայքի պետության աղգաբնակչության հիմնական մասը խոսում էր հայերեն լեզվի տարբեր բարբառներով և խոսվածքներով։ Այս հարցի կապակցությամբ բնորոշ է, որ մեզ հասած գրավոր աղբյուրները գիտեն հայերին իբրև մեկ ժողովուրդ, իսկ հայկական ցեղերը հայտնի չեն։ Ուրեմն ցեղերի միաձուլումը մեկ ընդհանուր ժողովրդի մեջ տեղի էր ունեցել շատ

---

81 Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 70—72 և հտ.։

82 Хен., Cyrop., III, 2, 17—24.

83 Strabo, XI, 14, 5.

84 Г. А. Меликишвили, К истории древней Грузии, էջ 85։

85 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 103։

86 Г. А. Меликишвили, К истории древней Грузии, էջ 72։

ավելի վաղ շրջաններում։ Հելլենիստական ժամանակաշրջանում արդեն գոյություն ուներ մեկ միասնական հայ ժողովուրդ՝ իր միասնական տերիտորիայով, լեզվով և մշակույթով։

ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ АРМЯНСКОГО НАРОДА

Академик АН Арм. ССР С. Т. ЕРЕМЯН

(Резюме)

Эпоха формирования армянского народа делится на четыре периода и соответствует четырем этнокультурным и историческим очагам на территории Армянского нагорья. **Первый период** это время существования племенного объединения Хайаса-Аззи (XV—XIII вв. до н. э.), локализуемого на территории античной Акилисены и долины р. Галис—«Первая Армения»—«страна Мушака» («Мусака» в хеттских иероглифических надписях XII—IX вв. до н. э.). Здесь жили мушки—протоармены—аримы—урумейцы. **Второй период** был ознаменован вторжением из центральных областей Малой Азии и Хайаса-Аззи (около 1165 г. до н. э.) на территорию Софены и Арзанены мушков и урумейцев. Здесь возникло новое объединение племен, известное в ассиро-вавилонских надписях как «царство мушков», а позже «Арме» или «Урме»||«Уруме». Впредь так называется страна Шубрна||Шуприа у ассирийцев и урартов. Если Хайаса-Аззи представляла собою родоплеменную организацию, сложившуюся на базе интеграции нескольких племен, близких по своему происхождению и языку, то Арме—Шуприа уже была союзом племен, образовавшихся на базе синтеза разнообразных этнических элементов как местных хурри-урартских племен, так и пришлых мушков—аримов.

В этот второй период все большую роль играла языковая общность. Племенные языки постепенно сливались в общем формирующемся армянском языке, сделавшись территориальными диалектами этого языка. Территория расселения этих племен находилась в благоприятных условиях для развития производительных сил. По этим землям пролегала магистральная дорога международного торгового обмена, шедшая из столицы Ассирии Ашшура в Канеш (нын. Кюль-тепе, недалеко от Кесарии Каппадокийской). Армянские племена оказались в районе, богатом железными рудниками и очень рано были вовлечены в торговый обмен. Это ускорило процессы социальной дифференциации.

Далее начинается **третий период** в истории формирования армянского народа—период длительного взаимодействия с государством Урарту. С 860-х годов до н. э. образовавшееся государство Урарту вошло в соприкосновение с этими племенами, которые уже были оседлыми земледельцами и переживали период военной демократии и перехода к ранним формам государственности.

Урартское государство в период своего могущества вело войны против страны Арме (Урме||Уруме), которая была завоевана при царе Ар-

тишти I (786—764), однако урартам Арме—Шуприа была подчинена около 60 лет (в 773—714 гг. до н. э.). После походов ассирийского царя Саргона II (722—705) в 714 г. до н. э. отпали от Урарту страны, расположенные на южных отрогах Армянского нагорья (Арме—Шуприа, Наири—Хубушкиа и Ардини—Мусасир). Позже они подчинились Ассирии, но это продолжалось всего 20 лет (673—653 гг. до н. э.). По всей видимости, в 653 году до н. э. они отпали и от Ассирии. В конце VII в. до н. э. армянские племена, составляющие «варварскую окраину» Урарту и Ассирии, объединились с мидянами и совместными ударами покончили с обеими древневосточными державами.

Период владычества Урарту был ознаменован проникновением армянских племен в пределы бассейна Ванского озера, где находились центральные области урартов. Это проникновение, носившее характер либо насильственного переселения, либо мирного просачивания, способствовало усилению армянского элемента в самом центре государства Урарту.

Процесс становления армянского народа был накануне своего завершения, когда армянские племена столкнулись с государством Урарту. В период наступившего внутреннего кризиса урартского государства начинается процесс ассимиляции самих урартов армянами. Урарту вошло в состав формирующегося армянского народа, как один из его основных компонентов. Особенно заметный вклад внесли урарты в в область культуры. Весьма знаменательно, что армянская историческая традиция связывает происхождение армян с центром урартского государства, с городской территорией столицы Тушпы (Вана).

На этом этапе формирования армян были налицо все те элементы, которые характеризуют народ, конкретно говоря, народ рабовладельческой формации. Здесь, в центральных областях хиреющего государства Урарту, завершился процесс сложения армянского народа. В этот период уже существовало общее название, которым армяне именуют себя и свою страну—Haykh (Հայք), восходящее к одному из основных компонентов, к этнониму Хайаса. К этому же времени относится упоминание об армянском языке.

В формировании народа важная роль принадлежит государству. В период падения Урарту (конец VII в. до н. э.) в Арме—Шуприи выделяется династия Скайорди, один из представителей которой, Паруйр, участвует в осаде Ниневии вавилонянами и мидянами в 612 г. до н. э., после падения которой он был признан армянским царем—«первым венценосцем» Армении. Вскоре (на рубеже VII—VI вв. до н. э.) и в самом центре Урарту власть преходит к армянской династии Ервандуни—Оронтидов.

Урартская письменность, которая удовлетворяла только узкие потребности царского двора и жречества, исчезла вместе с исчезновением урартской правящей династии.

Четвертый, завершающий период в истории формирования армянского народа связан с областью Айрарат, на среднем течении р. Аракс, когда Араратская долина становится притягательным центром армянских племен на пороге их полного слияния в единый народ. Хронологически четвертый период ограничивается рамками VI—V вв. до н. э. Это время кратковременного существования первого самостоятельного Армянского царства и могущества Мидийской державы, которое вскоре сменилось государством ахеменидского Ирана. Армянское царство этого периода распространилось на всей территории распавшегося государства Урарту.

В дальнейшем происходит распространение армянского этноса на всей территории Армянского нагорья, где в эллинистическую эпоху образовалось армянское эллинистическое государство Великая Армения. Страбон, говоря о завоеваниях армянского царя Арташеса I (189—161), отмечает, что в его время все население объединенного армянского государства было одноязычным (ὁμογλώττους), что **указывает на завершение этногонических и глоттогонических процессов, приведших к окончательному формированию армянского народа.**

Слияние местных и пришлых племен и образование в результате этого слияния армянского народа внешне выражалось в том, что этнонимы становились топонимами-названиями гаваров и областей. В период завершения формирования армянского народа в центральных областях бывшего государства Урарту урартов уже не было, а их остатки в лице алародов (в передаче Геродота) продолжали существовать в современной Араратской долине. После их окончательной ассимиляции армянами осталось название лишь области «Айрарат».